# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻԹԻ 10 (1660) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 22, 2014
VOLUME 34, NO. 10 (1660) SATURDAY, MARCH 22, 2014

Պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


**ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ**

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՔ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԷԿ ԲԵՄԻ ՎՐԱՅ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

Համայնքիս ընթացիկ տարուան Մարտ ամսուան երրորդ Կիրակին յատկանշուեցաւ իւրայատուկ հրապարակային հարցազրոյցով մը, զոր նախաձեռնած էր Պոլսահայ Միութիւնը: Համանուն միութիւնը, Շըրմըն փողոցի վրայ կանգնած իր սեփական շքեղ կեդրոնատեղիին մէջ, բեմ կը բարձրացնէր մեր աւանդական երեք կուսակցութիւններու (Ս.Դ.Հնչակեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն եւ Ռամկավար Ազատական) ներկայացուցիչներ՝ Ընկ. Գրիգոր Խոտանեանը (հնչակեան), Դոկտ. Վիգէն Յովսէփեան (դաշնակցական) եւ Մինաս Գոճայեանը (ռամկավար): Անոնք հրաւիրուած էին պատասխանելու երեկոյի հարցազրոյցը վարողներ՝ Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան Ատենապետ իրաւաբան Էտվին Մինասեանի, Միութեան Ընդհանուր Ժողովի ատենապետ՝ Տիար Սիմոն Անիլաչօղլուի եւ Միութեան Կրթաթոշակի Յանձնախումբի ատենապետուհի՝ իրաւաբանուհի Տիկ. Ժպիտ Չէրքինեան-Զընարի հարցումներուն:

Երեկոյի հարցազրոյցի Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի հոգաբարձու եւ ատենապետ՝ Տօքթ. Յովհաննէս Գուլակի բարի գալուստի եւ զեկուցողներու ծանօթացումէն ետք, կատարուեցան հարցադրումները, որոնք տեղին, լուրջ ու ընդհանրական բնոյթի էին:

Ներկայացուած բոլոր հարցերը, ըստ էութեան, կ'արտայայտէին մեր ժողովուրդի վերջին հարիւրամեայ ժամանակահատուածին դիմագրաւած մարտահրաւէրները: Այդ մարտահրաւէրները յաղթահարելու կոչուած մեր իւրաքանչիւր աւանդական կուսակցութեան ծաւալած աշխատանքը: Կ'ակնկալուէր, որ կողմերէն իւրաքանչիւրը բացատրէր իր կազմակերպութեան ծնունդը, կազմակերպումը, գաղափարախօսութիւնը եւ առաքելութիւնը:

Տրուած հարցերը սեղմօրէն առնչուած էին արտագաղթի, Սփիւռք-Հայրենիք կապերու սերտացման, միջազգային մակարդակի վրայ Արցախի հանրապետութեան ճանաչման, Հայաստանի հանրապետութեան դիմագրաւած տնտեսական, օրէնսդրական, ապահովական, պահանջատիրական, Ռուսաստանի կողմէ առաջադրուած մաքսային դաշնակցութեան մէջ ներգրաւման եւ Հայաս-

*Շար.ը էջ 18*

## Ղարաբաղի Մէջ Տօնական Համերգով Ողջունեցին Խրիմի Ինքնորոշումը



*Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ նախագահ Բակօ Սահակեան եւ Արցախի Թեմի առաջնորդ Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեան կը հետեւին տօնակատարութեան*

*Մարտ 18-ին Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցած է տօնական մեծ համերգ նուիրուած Խրիմի ժողովուրդի ինքնորոշման: Համերգը տեղի ունեցած է Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ:*

*«Վայրը պատահական չէ ընտրուած, քանի որ 22 տարի առաջ հենց այդ հրապարակից է Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը սկսել իր ինքնորոշման համար պայքարը», - «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է Արցախի հանրային հեռուստատեսութեան գլխաւոր խմբագիր Մերի Դաւթեան:*

*Տօնական մեծ միջոցառման ներկայ եղած են Լեռնային Ղարաբաղի բարձրաստիճան պաշտօնեաներ՝ ի դէմս նախագահ Բակօ Սահակեանի եւ Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլեանի:*

*Լեռնային Ղարաբաղի նախագահի խօսնակ Դաւիթ Բաբաեան այս առթիւ յայտնած է, որ նման միջոցառման մէջ որեւէ արտառոց բան չկայ, այն պարզապէս գարնանային առաջին համերգն է, որ նուիրուած է բոլոր ինքնորոշուած ժողովուրդներուն, որոնց շարքին՝ Խրիմի բնակչութեան:*

*«Արցախը կողմնակից է ազգերի ինքնորոշմանը, այսպէս է կոչւում համերգը», - պարզաբա-*

*Շար.ը էջ 4*

## Իսթանպուլի Մէջ Տեղի Ունեցած է Հայոց Ցեղասպանութեան Նուիրուած Համաժողով

*Իսթանպուլի «Իսմայիլ Բեշիքչի» հիմնադրամէն ներս, Մարտի 16-ին, Թուրք լրագրողներէ, փաստաբաններէ եւ մարդու իրաւունքներու պաշտպաններէ բաղկացած նախաձեռնող խումբը կազմակերպած է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ համաժողով մը՝ «2015 Թուականէն 1 պակաս. մեր անցեալն ու ապագան» խորագրով:*

*Նիստի ժամանակ բանախօսներէն Գայուշ Զալըքման Գավրիլով իր ընտանիքի պատմութեան օրինակով անդրադարձած է Հայոց ցեղասպանութեան ժամանակ հայ կանանց ու աղջիկներու կրած տառապանքներուն:*

*Բանախօսներէն Գիւլչիչէք Գիւնել Թեքին, անդրադառնալով ցեղասպանութեան ժամանակ քրտական գործօնին, նշած է, որ Մարտինի, Պաթումի, Դերսիմի եւ այլ հայաբնակ վայրերու մէջ քուրտերը կազմակերպուած կամ ոչ համակարգուած կերպով մասնակցած են հայերու կոտորածին, եւ այս փաստը այսօր կ'ընդունին նաեւ քուրտերը, որուն համար ներողութիւն կը խնդրեն:*

*Բաւականին բուռն անցած է համաժողովի երկրորդ նիստը, որու ժամանակ իրաւաբան բանախօսները ցեղասպանութեան անդրադարձած են իրաւունքի տեսանկիւնէն՝ համեմատականներ կատարելով մինչեւ օրս կատարուած ցեղասպանութիւններու միջեւ: Բանախօսները յայտնած են, որ «հայրենիքը պաշտպանելու բնագդով» պետական մակարդակով կը ժխտուի եւ ամէն ինչ կ'ընեն, որ խօսք չըլլայ ոչ միայն Հայոց ցեղասպանութեան, այլեւ հանրապետական շրջանին տեղի ունեցած բազմաթիւ կոտորածներու ու բռնութիւններու մասին:*

*Փաստաբան Ռամազան Դեմիրը նկատած է, որ միջազգային ասպարէզէն ներս պէտք է գործունէութիւն ծաւալել՝ պետութեան վրայ ճնշելու համար, անոր վարքը փոխելու եւ ապագային նման յանցանքներէն խուսափելու համար. «Թուրքիոյ քրէական օրէնսգիրքին մէջ մարդկութեան դէմ յանցանքը եւ ցեղասպանութիւնը պատժող յօդուածներ կան, սակայն*

*Շար.ը էջ 4*

## Սարգսեան - Փութին Հեռաձայնային Խօսակցութիւն

*Մարտ 19-ին, հայկական կողմի նախաձեռնութեամբ հեռաձայնային խօսակցութիւնը տեղի ունեցած է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի միջեւ:*

*Տեղի ունեցած է մտքերու փոխանակում Ուքրանիոյ տագնապի լուծման վերաբերեալ:*

*Հայաստանի նախագահի մամլոյ ծառայութեան տարածած տեղեկութիւններուն համաձայն, զրուցակիցները անդրադարձած են Խրիմի հանրաքուէին եւ արձանագրած են, որ այդ կը հանդիսանայ ազատ կամքին արտայայտման միջոցով ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքի իրականացման հերթական օրինակը:*

*Երկու պետութիւններու ղեկավարները նաեւ քննարկած են ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացը եւ այդ ուղղութեամբ ձեռնարկուող քայլերը: Հայաստանի նախագահը բարձր գնահատելով Ռուսաստանի գործունէութիւնը **ԵԱՀԿ** Մինսկի խումբէն ներս վերահաստատած է Հայաստանի պատրաստակամութիւնը շարունակելու հակամարտութեան լուծման ուղղութեամբ **ԵԱՀԿ** Մինսկի խումբի համանախագահներուն հետ միատեղ աշխատանքը:*

## Վախճանած է Արա Շիրազ



*Քանդակագործ Արա Շիրազ*

*Մարտ 18-ի գիշերը 73 տարեկանին Երեւանի մէջ մահացած է նշանաւոր քանդակագործ Արա Շիրազ:*

*«Ան բազմաթիւ հիանալի քանդակներու հեղինակ է: Իր հօրմէն՝ Յովհաննէս Շիրազէն, ու մօրմէն՝ Սիլվա Կապուտիկեանէն, ժառանգած էր հզօր ներաշխարհ՝ դառնալով հրաշալի արուեստագէտ»,- կը յայտնէ «Ազատութիւն» ռատիոկայանը:*

*«Մեծ կորուստ է ընդհանրապէս Հայաստան աշխարհի համար: Հրաշալի մարդ, արձանագործ... Միակ մխիթարանքն է իր գործերը, որոնք զարդարում են մեր հանրապետութիւնը, եւ քանի ծաղ-*

*Շար.ը էջ 4*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# «Այս ծանր վիճակը« եւ ինչպէս պէտք է դուրս գալ »այդ ծանր վիճակից»

ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերջին շրջանում իրենց ընդդիմադիր կամ ոչ իշխանական համարող կուսակցութիւնների առաջնորդները ծրագրային ելոյթներ ունեցան, եւ դա այն պարագայում, երբ ընտրութիւններ մօտ ապագայում նախատեսուած չեն եւ վերջերս ծրագրային բնոյթի քաղաքական դիրքորոշումներ են արտայայտել նաեւ հասարակական գործիչներից եւ քաղաքացիական ակտիւիստներից շատերը եւ նրանցից շատերը նշել են, որ անհրաժեշտ է ձեւաւորել միասնական քաղաքական օրակարգ եւ այօրուայ «ծանր վիճակից» Հայաստանը դուրս բերելու համար:

Մի կողմ դնելով այն հարցը, թէ արդեօք անկեղծ են բոլոր նման յայտարարութիւնները, արձանագրենք, որ քաղաքական եւ քաղաքացիական ակտիւի մեծ մասը յայտարարում է, որ ծայրայեղ դժգոհ է ներկայիս վարչախմբից եւ չի ցանկանում համակերպուել Հայաստանում հաստատուած ստատուս քուոյին եւ մնացած հարցերում ընդդիմադիր էլիտան միասնական մօտեցում չի ցուցաբերում եւ տարբեր են «այս ծանր վիճակի» բնութագրութիւնները, տարբերւում են նաեւ «ելքերի» վերաբերեալ մօտեցումները եւ ըստ «այս ծանր վիճակի» բնութագրութիւնների եւ «ելքերի» վերաբերեալ առկայ մօտեցումների՝ հայաստանեան ընդդիմադիր էլիտան կարելի է բաժանել երեք հիմնական խմբի:

Առաջին խումբը նշում է, որ «այս ծանր վիճակի» պատճառը հիմնականում այն է, որ Սերժ եւ Տիգրան Սարգսեանների քաղաքականութիւնը ամէն ինչում ձախողուել է, ինչի արդիւնքում Հայաստանում առկայ է ծայրայեղ ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակ, որը կարող է կործանել պետութիւնը եւ ուստի, ըստ այդ խմբի, առաջնահերթ քաղաքական խնդիրը պէտք է լինի իշխանափոխութեան հասնելը եւ այնպիսի իշխանութիւն ձեւաւորել, որը կ՛իրականացնի ճիշդ սոցիալ-տնտեսական ծրագիր եւ երկիրը դուրս կը բերի խորը ճգնաժամից:

Երկրորդ խմբի դիրքորոշումն այն է, որ միայն լաւ սոցիալ-տնտեսական ծրագիր ունեցող առողջ թիմի իշխանութեան գալով չէ, որ պէտք է դուրս գանք «այս ծանր վիճակից» եւ «այս ծանր վիճակը», ըստ այս խմբի, նախ եւ առաջ այն է, երբ պետութիւնը չի յարգում մարդու հիմնարար իրաւունքները, չկայ քաղաքական մրցակցութիւն, տիրում է իրաւական անհաւասարութիւն, իշխող կուսակցութիւնը, պետութիւնը եւ խոշոր բիզնեսը սերտաճած են, դատարանները կամայական որոշումներ են կայացնում, երբ պետական որոշումները կայացւում են ոչ թէ Սահմանադրութեան, այլեւ կրիմինալ օրէնքների հիման վրայ եւ վերոնշեալ խումբը «այդ ծանր իրավիճակից» ելքը տեսնում է ազատ եւ արդար ընտրութիւնների համար պայմանների եւ իշխանութիւնների ճնշումներին դիմագրաւող մեխանիզմների ստեղծման մէջ:

Երրորդ խումբն էլ պնդում է, որ «այս ծանր վիճակը» առաջին հերթին թոյլերի նկատմամբ ամենուրէք իրականացուող բռնութիւններն են, ցածրաճաշակ դոմինանտ մշակոյթը, անկիրթ միջավայրը, կրիմինալ բարքերի գերիշխանութիւնը, ծայրայեղ աղքատութիւնը, անպաշտպանուածութիւնը, էկոլոգիական աղէտները, հարուստների եւ աղքատների միջեւ ծայրայեղ անհաւասարութիւնը, պատրիարխատ ընտանիքը, գերիշխող ֆէոդալական բարքերը եւ այլն եւ վերոնշեալ խմբի ներկայացուցիչները «այս ծանր իրավիճակից» ելքը տեսնում են մարդկանց մտածողութիւնը փոխելուն ուղղուած լուսաւորչական գործունէութիւն ծաւալելու եւ տարբեր կոնկրետ իրաւունքների պաշտպանութեան լոկալ միութիւններ ստեղծելու, կոնկրետ լոկալ խնդիրների շուրջ շարժումներ ստեղծելու, տարբեր մակարդակի իշխանական մարմինների վրայ կետային ճնշում իրականացնելու եւ այլ նմանատիպ գործողութիւններ իրականացնելու մէջ:

Ինչպէ՞ս է հնարաւոր «այս ծանր վիճակի» այսքան տարբեր ընկալումների առկայութեան պայմաններում ստեղծել միասնական քաղաքական օրակարգ եւ կարծում ենք՝ այն հնարաւոր կը լինի ստեղծել միայն այն դէպքում, եթէ գտնուեն այնպիսի խնդիրներ եւ այդ խնդիրներին հասնելու գործողութիւններ, որոնց մէջ խմբերից իւրաքանչիւրը կը գտնի իր համար խիստ շահեկան մի բան, եւ եթէ դրանցում չլինեն այնպիսի կէտեր, որոնք բացարձակապէս անընդունելի են խմբերից որեւէ մէկի համար:

Կարծում ենք, որ այդպիսի օրակարգ կարող է ձեւաւորել խորքային, համակարգային փոփոխութիւններին միտուած, հասարակութեան տարբեր շերտերը եւ խմբերը ներառող քաղաքացիական շարժումը, որի հեռաւոր նպատակը կը լինի Հայաստանում ժողովրդավարական, իրաւական, սոցիալական պետութեան հիմնումը, եւ որը հենց իր ներսում կը բացառի ոչ դեմոկրատական վարքի որեւէ դրսեւորում եւ իր շարքերում չի հանդուրժի այդպիսի վարք դրսեւորող անհատներին:

Հասկանալի է, որ միասնական նպատակը դեռ բաւարար չէ վերոնշեալ երեք վիրտուալ խմբերի կողմից միասնական օրակարգ ձեւաւորելու համար եւ ընդհանուր նպատակ ունենալը դեռեւս չի ենթադրում գործողութիւններ, որոնք միանշանակ ընդունելի եւ ցանկալի կը լինեն բոլորի համար եւ սակայն, երբ շարժումը վերոնշեալ նպատակին մօտենալու համար իր առջեւ դնի այնպիսի կարճաժամկէտ խնդիրներ, որոնք կը կարեւորուեն բոլորի կողմից, այդ դէպքում մեծ է հաւանականութիւնը, որ կողմերը կը գան ընդհանուր յայտարարի եւ այդպիսի կարճաժամկէտ խնդիրներ կարող են լինել, օրինակ, ներկայիս վարչախմբի կողմից մարդկանց մանիպուլյացիայի ենթարկող մեխանիզմների, ինստիտուտների ապամոնտաժման հարցը կամ կոռուպցիոն ցանցերի վերհանումը, իշխանութիւնների նկատմամբ արդիւնաւէտ ճնշում իրականացնող հանրային ինստիտուտների ստեղծումը եւ այլն:

«ՀԵՏՔ»

# «Մեծ պայմանաւորուածութիւն» Ղարաբաղի հարցով

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ,

Չնայած այն բանին, որ Մեծ եօթնեակի երկրները միաձայն չեն ճանաչել Ղրիմի հանրաքուէն, ակնյայտ է, որ նրանցից ոչ մէկն ուժով չի վիճարկելու թերակղզու միացումը Ռուսաստանին: Ղրիմը դեռ երկար Ռուսաստանի վրայ ճնշման մեթոդ կը լինի, սակայն ակտուալ քաղաքականութիւնը մտածում է այն մասին, թէ ինչ է լինելու յետոյ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորլիքը «Թուիթերի» իր էջում առաջարկել է դասեր քաղել ուկրաինական իրադարձութիւններից Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ հակամարտութեան համար: Չնայած ԱՄՆ-ը չի ճանաչում Ռուսաստանի գործողութիւնների լեգիտիմութիւնն Ուկրաինայում, այլ ասպարէզներ կան, որտեղ նրանք կարող են միասին աշխատել, օրինակ, Ղարաբաղում խաղաղ գործընթացը, գրում է Ուորլիքը:

Օրերս համանախագահները հանդիպել են Հայաստանի եւ Ատրպէյճանի ԱԳ նախարարների հետ, որտեղ պէտք է համաձայնեցուեր նախագահների հանդիպումը: Ըստ ամենայնի, սակայն, դա չի յաջողուել, եւ համանախագահները պատրաստւում են Ապրիլին եւս մէկ անգամ այցելել տարածաշրջան:

Ռուսաստանն ակնյայտօրէն փորձում է դուրս պրծնել Մինսկի խմբի եռանկիւնուց եւ ինքնուրոյն որոշումներ կայացնել: Մոսկուայում Էդուարդ Նալբանդեանի հետ հանդիպումից յետոյ ամերիկացի եւ ֆրանսացի համանախագահները պատրաստուել են հանդիպել «ռուսական կողմի» հետ: Հանդիպում, սակայն, կամ տեղի չի ունեցել, կամ էլ չեն կարողացել պայմանաւորուել: Դա նշանակում է, որ Ռուսաստանն աւելի յամառօրէն է փորձում կազմալուծել Մինսկի խումբը եւ Ղարաբաղում ինքնուրոյն գործողութիւնների մանդատ ստանալ:

Ուորլիքի «Թուիթից» կարելի է եզրակացութիւն անել, որ Մինսկի խմբի կազմալուծման թեման ակտիւօրէն քննարկւում է ԱՄՆ եւ Ռուսաստանի միջեւ յարաբերութիւնների էսկալացիայի համատեքստում: Աւելին, Ռուսաստանը, հնարաւոր է, օգտագործում է Ղարաբաղը որպէս շանտաժի գործիք, եթէ արեւմտեան պետութիւնները վերջնականապէս փորձեն խզել կապերը Ռուսաստանի հետ: Այդ դէպքում Ռուսաստանն իրաւունք կը ստանայ ինքնուրոյն գործողութիւններ ծաւալել Ղարաբաղում, այսինքն՝ Իրանի հետ սահմանին: ԱՄՆ-ը ակնյայտօրէն չի ցանկանում դա, սակայն, դատելով այն բանից, ինչ տեղի է ունեցել Ղրիմում, եթէ Ռուսաստանն ինչ-որ քայլեր ձեռնարկի Ղարաբաղում, Ուաշինգտոնը չի ցանկանայ կամ էլ չի կարողանայ հակադրուել:

Հայաստանն ու Ղարաբաղը ոչ մի կերպ չեն արտայայտուել Ռուսաստանին Ղրիմի միանալու առթիւ: Ռուսաստանում տարբեր կոչեր են հնչում: Ժիրինովսկին, օրինակ, ասում է, որ եթէ Ղարաբաղը ցանկութիւն յայտնի միանալ Ռուսաստանին, ապա Մոսկուան պէտք է համաձայնուի: Մի քանի փորձագէտներ էլ Ղարաբաղին «առաջարկում են» նոր հանրաքուէ անցկացնել եւ միանալ Հայաստանին: Ինչպէս յայտնի է, Հայաստանը Սեպտեմբերի 3-ից յետոյ համարւում է Ռուսաստանի մաս եւ եթէ Ղարաբաղը միաւորուի Հայաստանի հետ, դա կը լինի միաւորում Ռուսաստանի հետ:

Ակնյայտ է, որ ղարաբաղեան կարգաւորման գործում հումկու ստորջրեայ շրջադարձեր են տեղի ունենում: Պատահական չէ, որ Ատրպէյճանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը կրկին նշել է, որ իր երկիրը պատրաստ է Մեծ պայմանագիր ստորագրել, եթէ Հայաստանը զօրքերը դուրս բերի Ղարաբաղից:

Ոչ Ռուսաստանը, ոչ էլ արեւմտեան համանախագահները դեռեւս չեն խօսում Մեծ պայմանագրի մասին, եւ յայտնի չէ, թէ դա ում նախագիծն է: Հաւանաբար, Թուրքիայինն է: Սակայն, այն, որ համանախագահութեան լուծարումը ԱՄՆ եւ Ռուսաստանի յարաբերութիւնների վատթարացման ֆոնին կարող է հանգեցնել Ղարաբաղում Մոսկուայի կտրուկ գործողութիւնների, աւելի քան իրական է թւում: Այդ թւում, «հայկական զօրքերի դուրսբերումը եւ փոխարինումը ռուսականով: Ամբողջ հարցն այն է, թէ արդեօք Ղարաբաղի հարցով կայ նման «Մեծ պայմանաւորուածութիւն», ինչպէս Ղրիմի հարցով:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

www.massisweekly.com

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Ընդդիմութիւնը ՀՀԿ-ին Առաջարկում է Միանալ Իրենց Պայքարին

Ազգային ժողովի ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբիկ Յակոբեանը Հանրապետական կուսակցութեանը առաջարկում է անում միանալ ոչ կառավարական չորս ուժերին եւ պայքարել համակարգային կոռուպցիայի, սուտերի դէմ, բիզնէսը փրկել տանիք կանգնող իշխանութեան բարձրագոյն ներկայացուցիչներից, ընտրութիւնների միջոցով չվերարտադրուել:

Ազգային ժողովի ոչ իշխանական ուժերն կրկին քննարկել են միասնական օրակարգ ձեւաւորելու հարցը:

Ոչ իշխանական ուժերից երկուսը՝ «Ժառանգութիւնն» ու Հայ ազգային կոնգրէսը, ամբողջական իշխանափոխութեան, միւս երկուսը՝ «Բարգաւաճ Հայաստանն» ու Դաշնակցութիւնը, քայլ առ քայլ առաջ շարժուելու կողմնակիցներ են:

Եւ քանի որ չորս ուժերը համոզուած են, թէ առանձին-առանձին փոփոխութիւնների չեն կարող հասնել, այս պահին կանգ են առել կառավարութեանն անվստահութիւն յայտնելու հարցի վրայ:

«Ժառանգութիւնից» Ռուբիկ Յակոբեանը Ուկրաինայի օրինակը բերեց՝ կառավարութեան հրաժարականն ընդունուեց, նախագահը երեք օր յետոյ փախաւ Կիեւից. - «Իշխանութիւնները շատ լաւ հասկանում են, որ այս չորս ուժերի համագործակցութեան արդիւնքում, որին, վստահ եմ, որ կ՚աջակցեն նաեւ ոչ խորհրդարանական ուժերը, քաղաքացիական նախաձեռնութիւնների հիմնական մասը, արդիւնքում տեղի է ունենալու իշխանափոխութիւն»:

«Բարգաւաճ Հայաստանից» Ստեփան Մարգարեանն ընդգծեց՝ կառավարութեան հրաժարականի պահանջը ակցի՚ա չէ. - «Եթէ չի գնա Հանրապետականը դրան, մենք արդէն կ՚որոշենք ինչ անել: Անշուշտ, բազմաթիւ այլ միջոցներ կան, մենք շարունակելու ենք մեր գործողութիւնները, կը հրապարակենք առաջիկայում ճանապարհային քարտէզը, երբ որ վերջնական կը լինի: Ցանկացած հարց չորսի համաձայնութեամբ է տեղի ունենում, հետեւաբար՝ չորսի անունից առաջիկայում մենք կը յայտարարենք ամբողջ ճանապարհային քարտէզը»:

Հանրապետական Գալուստ Սահակեանը քառեակի բարի նպատակներին, ժողովրդի վիճակը լաւացնել, երկրի կործանման դէմն առնել եւ այլ նմանատիպ յայտարարութիւններին չի հաւատում:

«Ողջ աշխարհը պաշտօն է ուզում, դուք գիտէք ենթատեքստը դա չէ՞», - հարցնում է Սահակեանը:

«Ժառանգութիւնից» Ռուբիկ Յակոբեանի համաձայն եթէ Հանրապետականը քաղաքական կամք ունի, պէտք է միանայ քառեակին, պայքարի համակարգային կոռուպցիայի, սուտերի դէմ, բիզնէսը փրկի տանիք կանգնել ցանկացող իշխանութեան բարձրագոյն ներկայացուցիչներից, ընտրութիւնների միջոցով չվերարտադրուի: Ռուբիկ Յակոբեանը կառուցողական առաջարկ արեց Հանրապետականին. - «Մեծամասնութիւնը կարող է միանալ այս չորսին, դառնալ հինգերորդը»:

Հանրապետական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը ընդդիմութեան նկատմամբ առանձնայատուկ վերաբերմունք ունի. - «Բոլորս պիտի վերաբերուենք դուք էլ, մենք էլ, որ ինչ-որ մի բան ստացուի: Պիտի երկիրը ունենայ ընդդիմութիւն»:

Բայց այսքան քնքշանքով հանդերձ, քառեակին միացող ՀՀԿ՝ Սահակեանը չի պատկերացնում:

«Սաղ աշխարհը ուզում է մեզ միանալ», - վստահեցրեց նա:

# Մարտի 1-ին Ով Ինչպէս Է Ծառուկեանի Թիկնազօրին Հասցրել 350 Միաւոր Զինուորական Համազգեստը


01-02.03.2008թ. [illegible]

ՑՈՒՑԱԿ

| Հ/հ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|
| 1 | [illegible] | 10 | 10 | |
| 2 | [illegible] | 140 | 160 | 49 |
| 3 | [illegible] | 62 | 94 | 51 |
| 4 | [illegible] | 40 | 27 | |
| 5 | [illegible] | 25 | 58 | 10 |
| 6 | [illegible] | 45 | 70 | |
| 7 | [illegible] | 2 | 20 | |
| 8 | [illegible] | 56 | 65 | |
| 9 | [illegible] | 57 | 9 | 30 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 437 | 513 | 140 |

*Մարտի 1-ի նախօրեակին Ծառուկեանին յանձնուած իրերու ցուցակի պատճէնը*

«Առաջին լրատուական»-ին յայտնի է դարձել, թէ 2008թ. Մարտի 1-ի դէպքերից առաջ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանն ինչպէս է պաշտպանութեան նախարարութիւնից ստացել զինուորական համազգեստները:

Յիշեցնենք, որ Փաստահաւաք խումբը փաստաթուղթ էր հրապարակել, այնուհետեւ Լեւոն Տէր-Պետրոսեանն էր անձամբ հնչեցրել, որ Մարտի 1-ի նախօրէին ՊՆ իրային պահեստից՝ թիւ 93353 զօրամասից, մի շարք բարձրաստիճան պաշտօնեաներ զինուորական համազգեստներ էին ստացել, որոնք բաժանել էին իրենց թիկնապահներին: Ենթադրւում էր, որ այդ համազգեստները հագած թիկնապահներն էլ մահացու վիրաւորանքներ են հասցրել ցուցարարներին:

Յիշեցնենք նաեւ, որ հրապարակուած ցանկի համաձայն՝ ՊՆ այդ զօրամասից ամենաշատ՝ մօտ 350 միաւոր զինուորական համազգեստ ստացել է Գ. Ծառուկեանը: Այսինքն՝ Մարտի 1-ի իրադարձութիւնների մէջ ամենաշատ «կամաւորականներ» ներդրել է Գ. Ծառուկեանը:

Մեր տեղեկութիւններով՝ ԲՀԿ ղեկավարին յատկացուած մեծաքանակ համազգեստը ոստիկանութիւնից Աւինջի յայտնի բլրակի վրայ գտնուող նրա առանձնատուն է հասցուել 08OO100 պետհամարանիշներով 330 մակնիշի 2000թ. արտադրութեան կանաչ Lexus մեքենայով: Համազգեստները ստացել է Յովիկ Յակոբեանը՝ Աբովեան քաղաքում Գ. Ծառուկեանի անուան մարզադպրոցի տնօրէնը (այժմ՝ ԲՀԿ-ի ղեկավարի կնոջ՝ Ջաւահիր Ծառուկեանի անձնական վարորդի եւ նրա թիկնազօրի անդամներից մէկի՝ Արմէն Յակոբեանի եղբայրը):

Շրջանառուող տեղեկութիւնների համաձայն՝ մի շարք բարձրաստիճան պաշտօնեաներ իրենց տրամադրութեան տակ ունեցել են եւ ունեն մեծ թիւով զինուած խմբաւորումներ, թիկնապահներ եւ հարկ եղած դէպքում նրանց գործի են դնում: Այսինքն՝ այդ խմբերը միայն տուեալ անձանց սեփական պահպանութեան համար չեն, հարկ եղած դէպքում նրանք մասնակցում են միջանձնային եւ քրէական բախումներին:

Գ. Ծառուկեանն իր հսկողութեան տակ ունի մի քանի հարիւր մարդ, որոնք խաղաղ պայմաններում մարզւում են տարբեր մարզասրահներում, ամրացնում մկանները եւ սովորում պրոֆեսիոնալ կերպով զէնք օգտագործել՝ երբեմն այդ զէնքն ուղղելով սեփական ժողովրդի դէմ:

# Աւետիսեանի Ընկերները Պնդում Են, Թէ Ենթարկւում Են Ճնշումների

Խարդախութեան մեղադրանքով կալանաւորուած ազատամարտիկ Վոլոդիա Աւետիսեանի մարտական ընկերները յայտարարում են, որ ճնշումների են ենթարկւում Ոստիկանութեան եւ Ազգային անվտանգութեան ծառայութեան աշխատակիցների կողմից:

Ոստիկանութիւնը հերքում է այս մեղադրանքները, իսկ Ազգային անվտանգութեան ծառայութիւնը՝ հրաժարւում մեկնաբանութիւններից:

Ազատամարտիկները, մինչդեռ, լրագրողների հետ հանդիպմանը չէշտում էին, որ իրաւապահ համակարգի ներկայացուցիչների կողմից ճնշումները մեծացել են յատկապէս անցած շաբաթ տեղի ունեցած հանրահաւաքից յետոյ:

Ազատութեան հրապարակում կազմակերպած հաւաքում ազատամարտիկները, պահանջելով մարտական ընկերոջ անյապաղ ազատ արձակումը, սուր քննադատութեան էին ենթարկել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին:

Նրանցից երեքը՝ Եուրա Աթոեանը, Գէորգ Սարգսեանը ու Ստեփան Ստեփանեանը այսօր յայտարարեցին, թէ հանրահաւաքից յետոյ տարբեր խողովակներով իրենց փորձել են ճնշել՝ յորդորելով չմասնակցել հետագայ բողոքի ակցիաներին:

Գիւմրեցի Եուրա Աթոեանը պատմում էր, որ ոստիկանութեան թաղային տեսուչը իր տուն է այցելել, տարբեր հարցեր տուել ընտանիքի անդամներին ու հեռացել:

«Նման բան երբեք չէր եղել», - ասաց նա՝ շարունակելով. - «[Հանրահաւաքի] յաջորդ օրը տնից դուրս եկայ, հարսս զանգեց, թէ եկել, դուռն է թակում, լուսամուտները: Հարցրի, թէ ով է, ասաց գրաժդանսկի շորերով է, լիազօրն է: Յաջորդ օրը հօրեղբօրս տուն է գնացել, հօրեղբօրս որդուն է հարցուփորձ արել»:

Ազատամարտիկները պատահական չեն համարում նմանատիպ այցելութիւնները: Համոզուած են, որ իրենց անձով հետաքրքրուողները հէնց իրաւապահ համակարգի ներկայացուցիչներ են:

Արմաւիրի մարզի Վարդանաշէն գիւղում բնակուող Գէորգ Սարգսեանն ու Ստեփան Ստեփանեանն նշում են, որ իրենց հանրահաւաքներին չմասնակցելու յորդորներ են փոխանցել գիւղապետարանի աշխատակիցները:

# Բագրատեանը Հայաստանի Տնտեսութեան Համար «Վատ Օրեր» Է Կանխատեսում

Ռուսաստանի իշխանութիւնները առաջին անգամ հրապարակաւ յայտարարել են տնտեսութիւնում առկայ ճգնաժամի մասին, եւ Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բագրատեանի համոզմամբ՝ հայաստանեան տնտեսութեան համար վատ օրեր են գալիս:

Reuters-ի փոխանցմամբ, Ռուսաստանի տնտեսական զարգացման փոխնախարար Սերգէյ Բելեակովը ելոյթ ունենալով Մոսկուայում մեկնարկած «Ռուսական բիզնեսի շաբաթ» միջոցառմանը՝ յայտարարել է. - «Ռուսաստանի տնտեսութիւնը ցոյց է տալիս ճգնաժամի յստակ նշաններ»:

«Ռուսաստանի տնտեսութիւնը բարւոք վիճակում չէ», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Բագրատեանը: - «Ես ենթադրում եմ, որ Ռուսաստանի էկոնոմիկայի նախարարի տեղակալը, երեւի հաշուի առնելով նաեւ, որ Ղրիմի իրադարձութիւններին կը յաջորդեն որոշակի սանկցիաներ, թոյլ է տուել իրեն ենթադրելու, որ այդ ամէնի արդիւնքում Ռուսաստանը ոչ միայն աճ չի ունենայ, այլեւ յաջորդ երկու եռամսեակներին կը գրանցուի ՀՆԱ ցուցանիշի անկում»:

Նախկին վարչապետի համոզմամբ՝ նման իրավիճակում Հայաստանի անդամակցութեանը Մաքսային Միութեանը բացասաբար կ՚ազդի մեր տնտեսութեան վրայ. - «Մաքսային Միութեանը միանալու արդիւնքում, եւրաինտեգրացումից հրաժարուելու պարագայում, մեր արտահանման բաները կը սահմանափակուեն: Արտահանումը դէպի Մաքսային Միութեան շանս կ՚ստանայ աւելանալու, բայց լուրջ սահմանափակումներ կ՚ունենանք դէպի Եւրոպա, որովհետեւ ստիպուած պէտք է լինենք կիրառել Մաքսային Միութեան դրոյքաչափերը, որոնք 2-2.5 անգամ աւելի բարձր են, քան Եւրոպական Միութեանը»:

# ԼՈՒՐԵՐ

## Թուրքահայ Յայտնի Մտաւորական Սեւան Նշանեանին Աջակցելու Համար Միջազգային Կոմիտէ Է Ստեղծուել



«Ազատութիւն եւ արդարութիւն Սեւան Նշանեանին» Միջազգային կոմիտէի ստեղծման մասին յայտարարութեան մէջ ասւում է. «2014 Թուականի Յունուարի 3-ից Թուրքիայում անազատութեան մէջ է գտնւում Թուրքիայի քաղաքացի հայազգի մտաւորական, քաղաքացիական գործիչ, լեզուաբան Սեւան Նշանեանը:

Նկատի ունենալով մտաւորականի նկատմամբ բանտարկութեան վճռի անընդունելիութիւնը, հետզհետէ անտանելի դարձող նրան պարտադրուած բանտային պայմանները, նոր ու ոչ պակաս անընդունելի դատական հետապնդումների սպառնալիքները, հանրաճանաչ մտաւորականների եւ քաղաքացիական գործիչների մասնակցութեամբ ստեղծուել է «Ազատութիւն եւ արդարութիւն Սեւան Նշանեանին» միջազգային կոմիտէ:

«Ազատութիւն եւ արդարութիւն Սեւան Նշանեանին» միջազգային կոմիտէն Սեւան Նշանեանի բանտարկութեան դատական վճիռը համարում է ծաղր՝ նետուած արդարութեան երեսին եւ անընդունելի տուրք՝ ազատ մտածումի իրաւունքի դէմ ուղղուած ամբոխային տրամադրութիւններին: Կոմիտէն Նշանեանի բանտարկութիւնը որակում է խտրականութեան եւ քինախնդրութեան բացայայտ դրսեւորում, որին ենթարկուել է մտաւորականը՝ Թուրքիայում այսպէս կոչուած պետական մտածողութեան դրոյթների նկատմամբ նրա անհաշտ ընդդիմութեան համար:

«Ազատութիւն եւ արդարութիւն Սեւան Նշանեանին» միջազգային կոմիտէն կոչ է անում Թուրքիայի իշխանութիւններին անյապաղ ազատ արձակել Սեւան Նշանեանը եւ դադրեցնել նրա նկատմամբ սանձազերծուած հալածանքները:

Կոմիտէն կոչ է անում համաշխարհային հանրութեանը, միջազգային կազմակերպութիւններին եւ մարդու իրաւունքի պաշտպան կենտրոններին դատապարտել Սեւան Նշանեանի արգելափակման փաստը եւ ձեռնարկել քայլեր նրա ազատ արձակման ուղղութեամբ:

Կոմիտէն կոչ է անում Թուրքիայի քաղաքացիներին տէր կանգնել պետական մարմինների պատժիչ մեքենայի զոհ՝ այդ երկրի համար մտաւոր այնքան արժէքաւոր աւանդ ստեղծած համաքաղաքացիին, մտաւորականին, Թուրքիայի բազմաշերտ մշակոյթի արժէքների պաշտպանին եւ տարածողին:

Կոմիտէն յայտարարում է, որ Թուրքիայում եւ արտասահմանում ձեռնարկելու է բազմատեսակ միջոցառումներ՝ նուիրուած Սեւան Նշանեանի դատին, որի յաղթանակին հաւատում է աներկբայօրէն՝ գործակցութեամբ ուժեղ կամքի տէր աշխարհի մարդկանց»:

Կոմիտէին անդամակցում են յայտնի մտաւորականներ Հայաստանից, Թուրքիայից, Ֆրանսիայից, Մերձաւոր Արեւելքից, ԱՄՆ-ից եւ Գերմանիայից:

## ԱՄՆ դեսպան. Ոչ ոքի ձեռնտու չէ Ղարաբաղեան հակամարտութեան շարունակութիւնը

Ուկրաինական իրադարձութիւններն աւելի կարեւոր են դարձնում Ադրբեջան-ԱՄՆ եւ Ադրբեջան-ԵՄ յարաբերութիւնները: Ինչպէս հաղորդում է ԱՊԱ-ն, այս մասին լրագրողներին է յայտնել Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռիչաեւդ Մորնինգսթարը:

Նրա խօսքով՝ «ուկրաինական իրադարձութիւնները եւս մէկ անգամ ցոյց են տալիս, թէ ինչու է հարկաւոր, որպէսզի ղարաբաղեան հակամարտութիւնը կարգաւորուի»:

«Կարեւոր է, որ Ադրբեջանն ու Հայաստանը քայլեր ձեռնարկեն Լեռնային Ղարաբաղում հակամարտութեան կարգաւորման համար՝ այդ կերպ վերջ տալով անկայունութեանը տարածաշրջանում: Ոչ ոքի ձեռնտու չէ այդ հակամարտութեան շարունակութիւնը»,- յաւելել է նա:

Յիշեցնենք, որ ԼՂՀ ԱԳՆ-ն աւելի վաղ յայտարարել է, որ Ղրիմի հանրաքուէն համարում է ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի դրսեւորում:

## Տօնական Համերգով Ողջունեցին

Շարունակուած էջ 1-էն

նեց Բաբաեան:

Լեռնային Ղարաբաղի Արտաքին Գործոց նախարարութիւնը յայտարարութիւն տարածեց յայտնելով, թէ Խրիմի Ինքնավար Հանրապետութենէն ներս հանրաքուէի կազմակերպումը կը դիտարկեն որպէս ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքի իրականացման հերթական դրսեւորում: Իսկ Լեռնային Ղարաբաղի Խորհրդարանը յայտարարեց, որ Ազգային Ժողովի խմբակցութիւնները եւ պատգամաւորական խումբը կ՚ողջունեն Խրիմի ժողովուրդին պատմական հնարաւորութիւնը իրականացնելու առիթով:

Խրիմի ժողովուրդի՝ Ռուսաստանին միանալու ցանկութիւնը ողջունող պաշտօնական Ստեփանակերտը համոզուած է, որ այդքան ալ կարեւոր չէ, թէ ինչ արդիւնքները կը հանգի Խրիմի ժողովուրդի ինքնորոշման իրականացումը:

«Կարեւորը ժողովուրդի կամքի արտայայտութեան դրսեւորումն է», - ըսած է Լեռնային Ղարաբաղի Նախագահի խօսնակը:

Այն հարցին, թէ արդեօք Խրիմի նախադէպը չի՞ կրնար վտանգաւոր ըլլալ Լեռնային Ղարաբաղի համար, նկատի առնելով այն հանգամանքը, որ ի դէմս Զորի Բալաեանի արդէն իսկ հնչած է կարծիք այն մասին, որ Ղարաբաղը կրնայ փրկել միայն Ռուսաստանը, Դաւիթ Բաբաեան պատասխանած է. - «Զորի Բալաեանը երբ որ այդ նամակը գրում էր, Ուկրաինայում այդպիսի որեւէ նախադրեալ չկար, որ կարող է նման ձեւով զարգանալ: Հիմա մենք ինչ է, չպիտի՞ ողջունենք նման միջոցառումները, եթէ Կոսովոն ողջունել ենք, ողջունել ենք Աբխազիան, Հարաւային Օսիան, Հարաւային Սուդանը, ինչո՞ւ չպիտի դա էլ ողջունենք»:

## Ադրբեջանը Զէնքի Ներկրման Ծաւալներով Եւրոպայում Երկրորդ Տեղում Է

2009-2013 Թուականներին աշխարհում ներկրուած սպառազինութիւնների 1.6 տոկոսը բաժին է ընկել Ադրբեջանին: Սա է վկայում Ստոկհոլմում գործող Խաղաղութեան ուսումնասիրութեան միջազգային ինստիտուտի նոր զեկոյցը աշխարհում զէնքի առեւտրի ծաւալների վերաբերեալ:

Ըստ այդ զեկոյցի՝ Եւրոպայում Ադրբեջանը զէնքի ներկրման ծաւալներով երկրորդ տեղում է եւ փոքր-ինչ է զիջում Մեծ Բրիտանիային: Եթէ վերջին չորս տարիներին Եւրոպա ներկրուած զէնքի աւելի քան 12 տոկոսը Մեծ Բրիտանիա է գնացել, ապա մօտ 12 տոկոսը ուղեւորուել է Ադրբեջան:

2009-2013 Թուականների կտրուածքով Ադրբեջանը 19-րդն է սովորական սպառազինութիւնների հիմնական զինատեսակների ներմուծման առումով, մինչդեռ 2004-2008 Թուականներին միայն 49-րդն էր: Վերջին տարիներին այդ երկիրը գրեթէ չորս անգամ կամ 378 տոկոսով աւելացրել է զէնքի ներմուծման ծաւալները:

Սովորական սպառազինութիւնների հիմնական տեսակները Ադրբեջանը ներկրել է եօթ երկրներից, որոնցից երկուսը Մաքսային Միութեան անդամ են. այդ երկրներն են՝ Ռուսաստանը, Բելառուսը, Ուկրաինան, Իսրայէլը, Թուրքիան, Հարաւային Աֆրիկան եւ Միացեալ Նահանգները:

Վերջին չորս տարիներին ներկրուած զէնքի 80 տոկոսը Ադրբեջանը ձեռք է բերել Ռուսաստանից, այդ թւում՝ երկու «S- 300» տիպի հրթիռային համակարգ, 94 «T90S» տանկ, 20 «Mi-35M» ռազմական ուղղաթիռ, 100 «BMP-3» զրահամեքենայ եւ այլ ծանր զրահատեխնիկա: Բելառուսից Ադրբեջանը գնել է 25 «ՍՈՒ -25» ռազմական ինքնաթիռ եւ 93 «T-72M1» տանկ: Ուկրաինայից Ադրբեջանը գնել է երկու « MiG-29» ռազմական ինքնաթիռ եւ 12 «Mi-24G» ռազմական ուղղաթիռ:

Իսրայէլը Ադրբեջանին մատակարարել է անօդաչու թռչող սարքեր, բացի այդ 2011-ին Ադրբեջանը պայմանագիր է կնքել իսրայէլական կազմակերպութիւնների հետ ռադարներ, հրթիռային համակարգեր եւ ափամերձ պաշտպանութեան համակարգեր ձեռք բերելու համար:

Եթէ գումարենք տարբեր երկրներից Ադրբեջանի ձեռքբերած զինտեխնիկան, ապա ստացւում է, որ 2009-2013 Թուականներին Ադրբեջանը գնել է ընդհանուր առմամբ 187 տանկ, 32 ուղղաթիռ, 27 ինքնաթիռ, երկու «S-300» հրթիռային համակարգ, շուրջ 100 զրահամեքենայ:

## Ցեղասպանութեան Նուիրուած Համաժողով

Շարունակուած էջ 1-էն

այն մտցուած է ձեւականօրէն, Եւրոպայի աչքին փոշի փչելու համար, ամենայն դէպս, ես չեմ տեսած, որ երբեք այս յօդուածները կիրառուին»:

Նիստի ընթացքին հարց հնչած է Թուրքիոյ կողմէ ցեղասպանութեան փաստը ընդունելէ ետք կատարուելիք քայլերու վերաբերեալ: Ի պատասխան՝ փաստաբան Էրջան Քանարը ըսած է.- «Կարելի է կազմել ճանապարհային քարտէզ, համաձայն որուն՝ Թուրքիան պէտք է ներողութիւն խնդրէ աշխախարհասփիւռ հայերէն, վերականգնէ անոնց քաղաքացիութեան իրաւունքը եւ թոյլ տայ գալ ու բնակելու իրենց հողերուն վրայ: Քանի որ Հայաստանի Հանրապետութիւնը որեւէ հողային կամ փոխհատուցման պահանջ մինչ այժմ չէ ներկայացուցած, ըստ էութեան, այդ պահանջը չի կրնար բարձրացնել, քանի որ Կարսի պայմանագրով հրաժարած է, հետեւաբար, կը կարծեմ՝ թրքական պետութիւնը պէտք է անձնապէս փոխհատուցէ ցեղասպանութեան ենթարկուածներու ժառանգորդներուն: Վերականգնէ հայկական բնակավայրերու նախկին անունները, վերանորոգէ եկեղեցիները եւ այլն»:

Նիստը ամփոփելով համաժողովը համակարգող Էրեն Քեսքին, որ Թուրքիոյ մէջ մարդու իրաւունքներու յայտնի պաշտպան փաստաբան է, որպէս վերջաբան ըսած է. «Մեր լռութեամբ մենք ալ մեր մեղքի բաժինը ունինք: Նոյնիսկ հակահայ կեցուածքով յայտնի Տողու Փերինչեքի ազատ արձակման փաստը մեր օրակարգ չբարձրացուցինք եւ նախընտրեցինք լռել»:

## Վախճանած Է Արա Շիրազ

Շարունակուած էջ 1-էն

կում է Հայաստանը, կը ծաղկի եւ Արա Շիրազի արուեստը», - ըսած է գեղանկարիչ Ռոբերտ Էլիբեկեան:

«Ես միշտ Արա Շիրազին նայել եմ որպէս աւագ ընկեր, որից շատ բան եմ սովորել, մանաւանդ՝ իր արուեստից», - յայտնած է Հայաստանի Նկարիչներու Միութեան նախագահ Կարէն Աղամեան: - «Շատ եմ ափսոսում, որ մեզնից հեռանում են մարդիկ, որոնք ստեղծում էին Հայաստանում մշակութային հզօր դաշտ... Այն հետքը, որ թողել է Արա Շիրազը, արդէն մնաց հայ կերպարուեստի պատմութեան մէջ»:

Գեղանկարիչ Համլետ Ասատրեան. - «Մեծ, տաղանդաւոր արուեստագէտ էր: Ափսոսանքս յայտնում եւ փշաքաղւում եմ: Մեծագոյն ու հրաշալի այր հայոց»:

Արա Շիրազ բազմաթիւ գործերու հեղինակ էր, որոնց շարքին՝ Անդրանիկ Օզանեանի, Ուիլիամ Սարոեանի, Յովհաննէս Շիրազի, Պարոյր Սեւակի, Եղիշէ Չարենցի, Վազգէն Սարգսեանի քանդակներուն:

## ԻՆՔՆԱՏԻՊ ԱՍՈՒԼԻՍ ՄԸ ԵՐԵՔ ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ



Լոս Անճելըսահայ գաղութի համար շատ ինքնատիպ ձեռնարկ մըն էր, որ տեղի ունեցաւ անցեալ Կիրակի, 16 Մարտ 2014, երեկոյեան ժամը 6ին Ուինէթքայի Պոլսահայ Միութեան սրահին մէջ:

Արդարեւ, այդ օր խուռներամ բազմութեան մը դիմաց՝ հիւրընկալուած էին հայ աւանդական երեք կուսակցութիւնները Պոլսահայ Միութեան կողմէ: Ներկաներուն մէջ կը տեսնուէին գաղութիս կրօնական, քաղաքական, մշակութային, մամուլի եւ հասարակական տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչները:

Հաւաքի բացումը կատարեց Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ՝ Տօքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան: Ան ըսաւ թէ սոյն միջոցառումին նպատակն էր բարձրացնել իրազեկութիւնը եւ խրախուսել քաղաքացիական ներգրաւուածութիւնը տրամադրելով տեղեկատւութիւն, երեք աւանդական կուսակցութիւններու պատմական ծագման ու ձեռքբերումներուն մասին, ինչպէս նաեւ ժամանակակից մարտահրաւէրներու վերաբերեալ:

Այնուհետեւ յաջորդաբար ելոյթներ ունեցան Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կողմէ ընկ. Գրիգոր Խոտանեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմէ Դոկտ. Վիգէն Յովսէփեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան կողմէ Դոկտ. Մինաս Գոճայեան:

Խօսք առնող վերոյիշեալ երեք անձնաւորութիւններն ալ իրենց ելոյթներուն մէջ հակիրճ պատմականն ըրին իրենց պատկանած կազմակերպութիւններուն եւ պարզեցին մշակուած ծրագիրները հայ ժողովուրդի ազատ ու անկախ իրաւակարգի տակ ապրելու մասին:

Պարզուեցաւ որ երեք կուսակցութիւններն ալ ՍԴՀԿ, ՀՅԴ եւ ՌԱԿ ունին հասարակաց ընդհանուր գիծեր որոնք կը գործադրուէին պայքարի դաշտին վրայ: Անոնց քաղաքական եւ հասարակական ակտիւ գործունէութիւնը շարունակուեցաւ նաեւ Ցեղասպանութենէն ետքն ալ, հայ ժողովուրդի ազատ ու անկախ եւ բարօր ապագայի ի խնդիր: Անոնք իրենց օգտակար ներդրումն ունեցան նաեւ Ղարաբաղի ազատագրութեան վսեմ գործին մէջ:

Երեք կուսակցութիւններու խօսնակներն ալ անդրադարձան որ Հայաստանի մէջ ժողովրդավարութիւնն ու արդարադատութիւնը զգալիօրէն բացակայ է առօրեայ կեանքին մէջ, մինչեւ իսկ սահմանադրական դատարանն անգամ ի վիճակի չէ հակակառավարական որոշում առնելու: Ուստի ներկայի Հայաստանը դէմ յանդիման կը գտնուի տարբեր մարտահրաւէրներու առջեւ:

Գ. Խոտանեանի, Վ. Յովսէփեանի եւ Մ. Գոճայեանի ելոյթներէն ետք տեղի ունեցաւ հարցազրոյց ասուլիս, որուն իրենց մասնակցութիւնը բերին Սիմոն Աճըլաճօղլու եւ իրաւաբաններ Էտվին Մինասեան ու Ժպիտ Ջէրքինեան-Զընար: Այստեղ արծարծուեցան շահեկան հարցեր, որոնք կը վերաբերէին ժամանակակից խնդիրներու՝ հայթրքական յարաբերութիւն, Հայաստանի անդամակցութիւնը Մաքսային Միութեան, Ղարաբաղեան հիմնախնդիրը, արտագաղթը, Հայաստանեայց Եկեղեցւոյ պառակտեալ վիճակը, կաշառակերութիւնը, Հայաստանի կապակցութիւնը Եւրոպայի Միութեան եւ Եւրասիայի Խորհուրդին, հայ-ռուսական համագործակցութիւնն ու սահմանադուռի բացումը եւ այլ հարցեր:

Ներկայ հասարակութեան եւս առիթ տրուեցաւ հարց-պատասխանի: Եղան տեղի եւ անտեղի հարցումներ եւ տրուեցան համապատասխան պատասխաններ:

Իր ընդհանրութեան մէջ ուսանելի եւ յաջող ձեռնարկ մըն էր:

Կը շնորհաւորենք կազմակերպիչները այս ինքնատիպ միջոցառումին համար:

Գ.Մ.

## ԱՐՔ. ԱԹԷՇԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԾՊՏԵԱԼ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Թուրքիայում կան նիւթեր, որոնց մասին չբարձրա ձայնելու մասին չգրուած օրէնքներ կան: Այդ արգելուած նիւթերից են նաեւ հայերի հետ կապուած բազմաթիւ դէպքեր:

Արգելուած նիւթերի շարքից այս անգամ ներկա յացնում է Պոլսոյ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք. Արամ Աթեշեանի հարցազրոյցը Թուր քական Bugun TV հեռուստաընկերութեանը:

-Ես չեմ խօսում Առաջին համաշխարհային պատե րազ մի տարիների մասին: Եթէ խօսեմ մեր տատիկների եւ պապիկների թուի մասին, կ՚ասեմ, որ նրանց թիւը 1 մլն-ի մօտ է: Այսօրուայ սերունդում կայ 100 հազարի մօտ մարդ, որոնց հայրն ու մայրը հայ են, իսկ իրենք մուսուլման: Նրանք հայերէն գիտեն եւ գաղտնի խաչ են կրում:

-100 հազարը բաւականին մեծ թիւ է, դա իմանալը հեշտ չէ: Իսկ նրանց հետ ձեր կապը եկեղեցո՞ւ միջոցով է:

-Ոչ, եկեղեցու միջոցով չէ: Անձնական կապերով:

-Ինչո՞ւ եկեղեցու միջոցով չեն ցանկանում, որ չբա ցայայտուե՞ն:

-Երբ գալիս են եկեղեցի, նրանց ինքնութիւնը պարզ է դառնում եւ բոլոր հարեւան ները հասկանում են դա: Սակայն որոշները խիզախութիւն են ունենում եւ եկեղեցիէն այցելում: Նախորդ տարի Սուրբ Զատիկից մէկ շաբաթ անց Տիարպեքիրում պատարագ մատուցեցի, մօտ 400 հոգի եկել էր:

-Նրանք ձեր նշած ծպտեալ հայե՞րն են:

-Նրանցից 200-ը մուսուլմաններ էին, 200-ը՝ հայի ար մատներ ունեցողներ: Ծպտեալները եկան պատարագին մասնակցեցին եւ ասացին, որ արդէն բացայայտում են իրենց ինքնու թիւնը: Սակայն չեն վերադառնում քրիստոնէութեան, քանի որ եթէ աշխատում են պետական հիմնարկներում, նրանց աշխատանքից կ՚ազատեն կամ հարեւանը կը սկսի անհանգստացնել: Դրանք դեռեւս տեղի են ունենում: Ընտանիքս այնտեղ է եւ դեռ որպէս մուսուլման է ապրում: Տիարպեքիրի Սիլուա նի շրջանում իմ աւագ քրոջ որդիներն են ապրում: Որոշները վերադարձել են արմատ ներին: Նրանք 1950-ին ճնշման տակ իսլամութիւն էին ընդունել: Փեսայիս ասել էին, որ եթէ մուսուլման չդառ նաս, կը սպաննենք: Ես 1954 թուականին եմ ծնուել: Երբ 4 կամ 5 տարեկան էի, քոյրս մուսուլման դարձաւ:

-Ինչպէս հասկացայ, ձեր փեսան եւ քոյրը որպէս մուսուլման են անձնագրեր ստացել եւ նրանց երեխա ների անուններն էլ հայկական չեն:

-Այո, երեխաներն էլ որպէս մուսուլման են ապրել: Անուններն էլ մուսուլմանական անուններ են: Նրանց թոռներն էլ մուսուլման դարձան: Ես նրանց կորցրեցի: Քոյրս թաքուն խաչ էր կրում եւ հայերէն խօսում:

-Բայց իրականում դուք նրանց չէք կորցրել: Նրանք սրտով քրիստոնեայ են:

-Ի՞նչ տարբերութիւն: Նրանք իմ եկեղեցու հետեւորդ չեն եւ նրանց չեմ կնքել եւ չեմ կարող:

-Լաւ, իսկ ծպտեալ հայերը ե՞րբ են իրենց երեխանե րին յայտնում, որ իրենք հայ են:

-Վերջին շունչը փչելուց առաջ: Տատիկները եւ պա պիկները մահից առաջ ասում են, որ հայ են:

-Ասում են, որ Թունջելիում (Տերսիմ-խմբ) մեծ թւով ծպտեալ հայեր կան, դա ճի՞շդ է:

-Ճիշդ է: Թունջելիի բնակչութեան 90 տոկոսը գուցէ հայ է: Մի 30 տարեկան տղայ եկաւ եւ ասաց, որ հայ է եւ ուզում է վերադառնալ արմատներին: Ես նրան ասացի՝ ապացուցի, սակայն չկարողացաւ: Նա շատ գնաց-եկաւ, սկսեց անհանգստացնել եւ մի օր նրա հայրը զանգեց ու ասաց. »Ես քաղաքապետարանում եմ աշխատում, երբ թոշակի անցնեմ, գալու եմՍտամպուլ՝ վերադառնալու իմ արմատներին: Այստեղի ժողովրդի 90 տոկոսը հայ է: Խնդրում եմ՝ ընդունէք իմ որդուն«: Ես ընդունեցի նրան, կնքեցի եւ հիմա նա մեր եկեղեցու անդամ է:



ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
99ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ

Կազմակերպութեամբ՝ Փասատինայի Հայ Համագաղութային Մարմինի

Հինգշաբթի, Ապրիլ 24, 2014
Փասատինայի Քաղաքապետարանին Առջեւ
100 N. Garfield Ave., Pasadena, CA 91101 • Առաւօտեան ժամը 10:00-ին

COMMUNITY COMMEMORATION
FOR THE 99TH ANIVERSARY
OF THE ARMENIAN GENOCIDE OF 1915

Presented by Armenian Community Coalition of Pasadena

Thursday, April 24, 2014, at 10:00am
In front of Pasadena City Hall – 100 N. Garfield Ave., Pasadena, CA 91101

# ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ... ԴԱՐՁԵԱ՛Լ ՊԱՏԵՐԱԶՄ

«Թուրքն այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթուելուց յետոյ կը դառնայ կրթեալ աւազակ եւ այն ժամանակ աւելի վտանգաւոր կը դառնայ...»:

**Րաֆֆի**

*ԷՏՈՒԱՐՏ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ*

### *Մ Ո Ւ Տ Ք*

*Րաֆֆիի մեծակտաւ ստեղծագործութիւններուն ծանօթ, բայց կենսագրութեան անտեղեակ մէկուն գուցէ թուի, թէ կեանքի մայրամուտին հասած եւ կեանքի վաստակաշատ տարիներուն իմաստնացած ալեհեր ու մարգարէացած ծերունիի մը հետ գործ ունի:*

*Սակայն այդպէս չէ. ընդամէնը յիսուներեք տարի ապրած է Րաֆֆին, եւ հանճարեղ վիպասանին անընդգրկելի իմաստութիւնը ոչ թէ իր պատկառելի տարիքէն, այլ հրաշագործ ու անապակ այն աղբիւրներէն կու գայ, որոնք ծնունդ տուած են մեր դիւցազներգութեան Նահապետներ՝ Սանասարին ու Պաղտասարին, որոնցմէ սնած եւ իրենց երիտասարդութեան մեծաքանքար իմաստունի համբաւ նուաճած են Նարեկացին, Տէրեանը, Թումանեանն ու Զարենցը, Կոմիտասը, Վարուժանն ու Սիամանթոն...*

*Անոնց նոյնիսկ "ամէնէն տարեցը" այդպէս ալ յիսունհինգ տարեկանի սեմին չհասաւ, բայց այդ փաստը բնաւ չխանգարեց, որ հանճարներ ծնած ու սնած երախտապարտ ժողովուրդը հետագային անոնց ապրած գրական ու մշակութային ժամանակաշրջանները ուղղակի իրենց անուններով կոչէ: Վերոյիշեալ մեծերուն համեմատութեամբ (Նարեկացիէն զատ) Րաֆֆին այնուամենայնիւ "երջանիկ բացառութիւն" կազմեց, որովհետեւ ան չտեսաւ, աւելի ճիշդը ըսելու համար, ականատեսը չեղաւ այն հրէշաւոր պետական դաւադրութեան ու յանցագործութեան, որ հետագային "Ցեղասպանութիւն" եզրով պիտի կոչէին: Ան մահացաւ մարդկութեան պատմութեան մէջ ամենաստոր ծրագրի իրագործման առաջին հզօր ալիքէն /1895-1896/ եօթը տարի առաջ: Բայց արդեօ՞ք չտեսաւ, արդեօ՞ք իր միտքի կուռ տրամաբանութեամբ ու հոգիի խորաթափանցութեամբ չզգաց այն, ինչ պիտի կատարուէր...:*

*Անշուշտ տեսաւ. չտեսնէր՝ մարգարէական յստակ բանաձեւի չէր վերածեր իր ահազանգի պէս հնչող ա՛յն մտորումները, որ մինչեւ այսօր աններելի եւ անհիմն լաւատեսութեամբ ժամանակ առ ժամանակ կասկածի տակ կը փորձեն առնել չես գիտեր ուրկէ յայտնուած նաե՛ւ հայրենի սուտ ժողովրդավարները...*

### *ԹՈՒՐՔԸ*

*Երբ հայերու ցեղասպանութիւնը իրագործելու վերջնական որոշում կ՛առնուի, Դոկտոր Նազըմ, որ նաեւ երիտթուրքերու ղեկավարներէն էր եւ Հայոց Ցեղասպանութեան գլխաւոր պատասխանատուներէն մին, կը նշէ.*

*«Հայ ժողովուրդը պէտք է հիմնովին ոչնչացնել, որպէսզի ոչ մէկ հայ մնայ մեր երկրին մէջ, եւ այդ անունն իսկ մոռցուի:*

*Այժմ պատերազմ կ՛ընթանայ, այսպիսի յարմար առիթ չի կրնար ըլլալ: Մեծ տէրութիւններու միջամտութիւնը եւ համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները աննկատ կը մնան, իսկ եթէ անոնք իմանան, ապա զիրենք կատարուած փաստի առջեւ կը կանգնեցնենք, եւ այդպիսով հարցը կը վերանայ: Այս անգամ մեր գործողութիւնները հայերու ամբողջական ոչնչացման բնոյթ պէտք է կրեն, անհրաժեշտ է ոչնչացնել բոլորը, մինչեւ վերջին մարդը... Ես կ՛ուզեմ, որ այս հողին վրայ թուրքը եւ միայն թուրքը ապրի եւ ամբողջապէս տիրապետէ: Թող կորչին բոլոր ոչ թուրքական տարրերը, ինչ ազգութեան եւ կրօնքի ալ անոնք պատկանին»:*

*Սահմռկեցուցիչ է այն, որ այս խօսքերուն հեղինակը ո՛չ թէ մոլեռանդ ու կիսագրագէտ Շէյխ-ուլ-Իսլամ, կամ, ծայրայեղ պարագային ռազմա-քաղաքական գործիչ էր, այլ "յառաջադէմ" եւրոպաներուն մէջ ուսանած եւ կրթուած՝ անթափանց խաւարի կայսրութեան հանրակրթութեան նախարարն էր:*

*Հայոց Ցեղասպանութիւնը կազմակերպուած եւ ամենադաժան կերպով իրագործելու համար «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի որոշումով 1914-ի Փետրուարին ստեղծուեցաւ Երեքի գործադիր կոմիտէն՝ որուն անդամներն էին Դոկտոր Նազըմ, Շաքիր Պեհաէտտին եւ Միտհաթ Շիւքրի:*

*Երիտթուրքական եռապետութիւնը՝ Թալեաթ, Էնուեր եւ Ճեմալ, այս կոմիտէին միջոցաւ կը գործէր, եւ անոնց վրայ դրուած էր Օսմանեան կայսրութեան տարածքին ամբողջ հայութեան տեղահանման եւ ջարդերու կազմակերպման ու իրագործման ամբողջ պատասխանատուութիւնը: Կոմիտէն, որ օժտուած էր ամենալայն լիազօրութիւններով՝ մանրամասնօրէն մշակած էր հայերու տեղահանութեան եւ ոչնչացման բոլոր հարցերը՝ ըստ շրջաններու անոնց տեղահանութեան ժամկէտները, ուղիները եւ վայրերը, զանոնք ոչնչացնելու նպատակով կեդրոնացման վայրերը եւ այլն...*

*Երեքի կոմիտէի տրամադրութեան տակ դրուեցաւ նաեւ այսպէս կոչուած "Յատուկ կազմակերպութիւն"-ը, որ ստեղծուած էր երիտթուրքերու կուսակցութեան որոշումով, եւ անոր վրայ դրուած էր հայերու ցեղասպանութիւնը իրագործելու պարտականութիւնը: Անոր անմիջական ղեկավարը Պեհաէտտին Շաքիրն էր: "Յատուկ կազմակերպութիւնը "կազմուեցաւ" բանտերէն այդ նպատակով արձակուած քրէական յանցագործներէ, չեթէներէ՝ աւազակախումբերէ, որոնք բոլորը ընդունակ էին ամենասոսկալի ոճրագործութիւններ կատարելու:*

*Թէ ինչ կատարուեցաւ եւ ինչպէս պատժուեցան մարդու կերպարանք հագած այդ մեծագոյն ճիւաղները՝ քաջ յայտնի է բոլորիս, եւ այդ մասին հազարաւոր յօդուածներ ու ականատեսներու վկայութիւններ կան: "Արարատ" օրաթերթը նոյնպէս, իր կարգին, կրկին ու կրկին, անպայմանօրէն պիտի անդրադառնայ որեւէ արդարացում եւ վաղեմութիւն չունեցող այդ հրէշաւոր յանցագործութիւններուն, մանաւանդ որ Ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցին ընդառաջ, արխիւային նորանոր ու զարհուրելի իրողութիւններ ի յայտ կու գան:*

*Այսօր սակայն, խօսքը երկու դատաւարութիւններուն մասին պիտի ըլլայ, որոնք կասկածի նշոյլ իսկ չեն ձգեր թերահաւատները համոզելու, որ դիցուկ այդ զոյգ դատաւարութիւնները, որ յաճախ որպէս ճշմարտութեան յաղթանակ կը ներկայացուին՝ ոչ այլ ինչ են, քան քստմնելի յանցագործութեան նոյնքան քստմնելի ուրացումը եւ նոյնիսկ... շարունակութիւնը...*

*Գանք, սակայն, ամենազօր փաստերուն:*

*...1920-ի Յունուարէն սկսեալ կեանքի կը կոչուի գերմանացիներուն համար նուաստացուցիչ Վերսայեան պայմանագիրը, որով Գերմանիան կը մտնէր անգլիացիներու լիակատար հսկողութեան տակ: Այս իրողութիւնը շատ կարեւոր է, հասկնալու համար, որ այն ինչ կը կատարուէր*

*Գերմանիոյ մէջ Առաջին Աշխարհամարտէն ետք՝ առանց անգլիական յատուկ ծառայութիւններու հովանաւորութեան՝ չէր կրնար տեղի ունենալ:*

*Եւ այսպէս... 1918-ի Նոյեմբեր 1-ի լոյս 2-ի գիշերը, Սթամպուլէն գերմանական ռազմանաւով փախչող Թալեաթ փաշան ու իր գործընկերները նախ կ՛երթան այդ շրջանին չէզոք Սեւաստոպոլի մօտ գտնուող Եւպատորիա, այնուհետեւ գերմանացիներուն նախապատրաստած շոգեկառքով հոնկէ կ՛անցնին Գերմանիա: Գերման կառավարութիւնը զիրենք նախ կը տեղաւորէ Պերլինէն 50 քմ հեռու՝ Փոթստամ քաղաքի մերձակայքը գտնուող Նիւ Պապելսպըրկ, ուր գերմանացի "բարձր հասարակութեան" ամենայայտնի մարդոց ամառանոցներն էին:*

*Այս մասին իբրեւ թէ նոր տեղեկացուած թուրքական կառավարութիւնը՝ Ահմետ Իզզեթ փաշային գլխաւորութեամբ, գերմանացիներէն կը պահանջէ գոնէ ռազմական թեւի ներկայացուցիչ Էնուեր եւ Ճեմալ փաշաները յանձնել, սակայն գերման կառավարութիւնը մտադիր չէր յանձնել յատկապէս Թալեաթ փաշան, որովհետեւ "ան բարեկամական ջերմ յարաբերութիւններ հաստատած էր բարձրագոյն սպայական կազմին հետ եւ գերման հասարակութեան կողմէ կ՛ընկալուէր որպէս Օսմանեան կայսրութեան արդիականացման համար ջանք թափած յեղափոխական եւ Գերմանիոյ վաղեմի բարեկամ": (Մէջբերումը՝ պաշտօնական նամակէն):*

*Ժամանակ մը ետք Թալեաթ փաշան կնոջ՝ տիկին Հայրիէին հետ կը տեղափոխուի Պերլինի մէջ ամենաճոխ թաղամասի համբաւ ունեցող Շարլոթենպուրկի ինը սենեակներէ կազմուած ընդարձակ տունը:*

*Թալեաթ փաշան, որ «Ջաֆէր Սայի», «Ալի Սայի», «Մեհմետ Սայի» կեղծանուններով երեք տարի ապրած էր այս հասցէի տակ, այդ տարիներու ընթացքին տունը ո՛չ միայն Գերմանիոյ, այլեւ Եւրոպայի նախկին երիտթուրքերու հանդիպման վայրին վերածած էր եւ տենդագին փորձ կ՛ընէր կազմակերպելու Եւրոպայի չորս կողմը սփռուած իթթիհատականները:*

*Ան բարձր մակարդակի քաղաքական հանդիպումներ կ՛ունենայ Իտալիոյ, Զուիցերիոյ եւ եւրոպական այլ երկիրներու մէջ: Թալեաթը խոշոր դրամատէր Տաւիտոֆֆի (համաշխարհային այս դրամանենգին դրամատունե՛րը կ՛ուղղորդէին թէ՛ ռուսական յեղափոխութեան պատժիչ թեւին գործողութիւնները եւ թէ՝ Քեմալ Աթաթուրքը իշխանութեան բերելու դրամական անսահմանափակ ներհոսքերը) միջնորդութեամբ,*

*Շար.ը էջ 20*


Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900, Los Angeles, CA 90048
805 East Broadway, Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500, Pasadena, CA 91101

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B



A.B.A. INSURANCE SERVICES

New York Life · Anthem · BlueShield · Aetna · Health Net · Cigna · Kaiser Permanente

Seniors 65 & Up · Medicare Supplements · Insurance · Prescriptions Drugs RX · Benefits

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՍՓԻՒՌՔԻ ՄԻՋԵՒ ՓՈՓՈԽՈՒՈՂ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ*
*«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր*

Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարարութիւնը անցեալ տարուան Դեկտեմբերին խումբ մը մասնագէտներ եւ վերլուծաբաններ հրաւիրած էր Երեւան քննարկելու Սփիւռքի փոփոխուող դերը հայրենիքի նկատմամբ: «Յարափոփոխ աշխարհ, փոփոխուող Սփիւռք» խորագիրով կլոր սեղան-քննարկման մասնակիցները եկած էին՝ Միացեալ Նահանգներէն, Ռուսիայէն, Արժանթինէն, Գերմանիայէն, Ուքրանիայէն, Լիբանանէն եւ Հայաստանէն:

Քննարկումը նուիրուած էր սփիւռքի կազմութեան, առկայ մարտահրաւէրներուն, Հայաստան-սփիւռք գործակցութեան, Հայաստանի եւ սփիւռքի միջեւ առաւել սերտ համագործակցութեան կատարելագործման, աշխատանքի նոր ձեւերու եւ միջոցներու փնտռտուքին ու հեռանկարներուն:

Ստորեւ կը ներկայացնեմ հատուածներ հանդիպման ժամանակ ունեցած իմ ելոյթէս.

Հայաստանի անկախացումէն ետք սփիւռքը կանգնեցաւ բոլորովին նոր կացութեան մը առջեւ: Շատ մը սփիւռքահայեր անակնկալի եկան ազատ Հայաստանի վաղեմի բաղձալի երազանքի յանկարծակի իրականացումէն: Նոր բառեր յայտնուեցան անոնց բառապաշարին մէջ. Արցախ, երկրաշարժ, շրջափակում, արձանագրութիւն, ընդդիմութիւն, համաձայնական կառավարութիւն, իշխանափոխութիւն:

Սփիւռքահայերու մեծ մասին համար շատ դժուար էր տարանջատել անհատի, համայնքի կամ կազմակերպութեան գործողութիւնները պետութեան իրաւասութիւններէն եւ պարտաւորութիւններէն: Միաժամանակ, Հայաստանի նոր ղեկավարները լիովին չըմբռնեցին սփիւռքահայերու հայրենասիրական զգացումները, փափաքներն ու իղձերը, եւ ասոր իբրեւ հետեւանք՝ անախորժ խրամատ յառաջացաւ երկու կողմերուն միջեւ:

Հարցը աւելի բարդ է, քանի որ սփիւռքը միաձոյլ գոյութիւն չէ, այլ կազմուած է բազմաթիւ եւ բազմատեսակ սփիւռքներէ, իւրաքանչիւրը ունի իր առանձնայատկութիւնները՝ հաստատուելով եւ ապրելով տարբեր ժամանակաշրջաններու, օտար երկիրներու մէջ եւ գոյատեւելով տարբեր լեզուամշակութային ազդեցութիւններու տակ:

Երբ Հայաստանի մէջ լրագրողները ինծի կը հարցնեն այս կամ այն հարցին վերաբերեալ սփիւռքի տեսակէտներու մասին, ես կը դժուարանամ պատասխանելու: Ինչպէ՞ս կրնայ ոեւէ մէկը ընդհանրական ներկայացնել եօթը միլիոն սփիւռքահայերու բազմաբնոյթ տեսակէտները: Սփիւռքի մեծամասնութեան կարծիքը արտացոլացնելու համար պէտք է կազմակերպել համահայկական կառոյց մը կամ ընդլայնել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործառոյթները հանգանակութենէն անդին կամ ալ ստեղծել բոլորովին նոր կառոյց մը, որ ներկայացնէ Հայաստանէն եւ Արցախէն դուրս ամբողջ աշխարհի հայութիւնը՝ «Մէկ հայ, մէկ քուէ» սկզբունքի հիման վրայ: Այս ձեւով ընտրուած ներկայացուցիչները իրաւասու կ'ըլլան խօսելու սփիւռքահայերուն անունով եւ պարբերաբար հանդիպումներ ունենալու Հայաստանի ու Արցախի ղեկավարութիւններուն հետ՝ ճշդելու համազգային առաջնահերթութիւնները եւ խորհրդակցելու խնդրայարոյց հարցերու շուրջ:

Հայ ժողովուրդի բոլոր երեք թեւերու (Հայաստան, Արցախ եւ սփիւռք) ղեկավարները կրնան այնուհետեւ քննարկել իրենց դիրքորոշումները եւ համաձայնիլ դերերու բաժանումին շուրջ: Այսպիսի քաղաքակիրթ եւ ազգային շահերէ բխող մօտեցումը աւելի նախընտրելի է, քան՝ յարատեւ ներքին պայքարներն ու բախումները, որոնք երբեմն տեղ կը գտնեն, ինչպէս եղաւ Հայ-Թրքական արձանագրութիւններու ստորագրութեան ատեն:

Նախընտրելի է, որ Հայաստանի իշխանութիւնները աւելի նրբանկատ ըլլան սփիւռքահայերը յուզող կարեւոր հարցերու նկատմամբ եւ խորհրդակցին անոնց հետ նախքան այդ հարցերուն շուրջ վերջնական որոշումներ կայացնելը:

Հասկնալի է անշուշտ, որ Հայաստանի ղեկավարները պարտաւոր չեն ընդունիլ երկրի սահմաններէն դուրս գտնուող ոեւէ մէկուն հրահանգները: Բոլոր հարցերուն շուրջ վերջնական որոշում կայացնելու ատեն, այնուամենայնիւ՝ անոնք բարոյական եւ ազգային պարտաւորութիւն ունին՝ նկատի ունենալու սփիւռքահայ գլխաւոր կազմակերպութիւններու դիրքորոշումը՝ սփիւռքի ընտրովի կառոյցի բացակայութեան պայմաններուն մէջ: Ամէն պարագայի, Հայաստանի իշխանութիւնները պատասխանատու են ազգին առջեւ իրենց տուած որոշումներուն համար: Անոնք կը գնահատուին, երբ ճիշդ որոշումներ կը կայացնեն եւ կը քննադատուին սխալներ գործելու պարագային:

# USC Student Syuzanna Petrosyan Shares Top Prize in Shoah Foundation Film Competition



**Top prize winners Syuzanna Petrosyan and Greg Irwin with USC Shoah Foundation Executive Director Stephen D. Smith**

LOS ANGELES -- A student from the University of Southern California who describes herself as a descendant of survivor's of the Armenian Genocide shared the top prize at this year's Student Voices Short Film Contest sponsored by USC Shoah Foundation - The Institute for Visual Learning and Education.

Syuzanna Petrosyan and fellow student Greg Irwin won the award March 6 for their short film "Play for your Life," which looks at the orchestras organized by the Nazis in German concentration camps during World War II.

Petrosyan said the film was inspired by Alice Herz-Somner, a pianist who, until her death at 110 in February, was the oldest living Holocaust survivor. Music factors heavily in Herz-Somner's testimony in the Shoah Foundation's Visual History Archive, which contains nearly 52,000 recorded testimonies of survivors and other witnesses of the Holocaust and other genocides.

In April 2010, The Institute signed a historic agreement with the Armenian Film Foundation and the late filmmaker Dr. J. Michael Hagopian to incorporate 400 testimonies of survivors of the Armenian Genocide. The interviews, which are set to come out in April 2015, will be used for educational purposes through the Visual History Archive, where they will be stored in perpetuity.

Petrosyan said her interest in entering Student Voices comes from her own Armenian background and interest in exploring the various dimensions of genocides. As a public diplomacy master's candidate, she said, "it is important to understand not only the big picture and history of genocides, but also to observe the smaller and personal stories of survivor's of the biggest crimes in history."

The film was the second movie featuring Herz-Somner to win an award in one week. She is also the subject of the Academy Award-winning documentary The Lady in Number 6: Music Saved my Life.

Student Voices is a chance for all USC graduate and undergraduate students, regardless of major, to create short films that incorporate survivor's testimony from the Visual History Archive.

# AGBU North America Schools Forum March 21-22, 2014, Southfield, Michigan

Administrators and Armenian subject teachers from four AGBU North America schools will meet at the AGBU Alex and Marie Manoogian Charter School in Southfield Michigan, on March 21-22, 2014, for a forum on Armenian education.

During the two day forum, the teachers and administrators will visit Charter School classes in session, exchange observations and experiences and will share syllabuses, teaching strategies and resources. During a conference session on Saturday, March 22nd, the participants will present and discuss topics related to curriculum content, teaching models, methodologies and resources that have evolved over the recent years to meet the needs and expectations of the new generation of students and parents, and criteria that measure the effectiveness of the schools in serving AGBU's mission of preserving and promoting the Armenian identity and heritage through educational, cultural and humanitarian programs. The forum will explore the applicability of these methodologies and resources to non-traditional school settings or non-Armenian/public school environments, to reach out to a wider circle of school age children. The forum will also tackle topics related to teacher exchanges between AGBU schools, teacher preparation and qualifications, and creative strategies that allow transition of teaching skills and content knowledge to different settings.

The AGBU schools collaborate with the AGBU Virtual College (www.avc-agbu.org) using its technology, multilingual online courses, tutorials, and its expanding resources.

The AGBU North America Schools participating in the forum are, Manoogian-Demirdjian School, Canoga park, CA, Vatche & Tamar Manoukian Pasadena High School, CA, Armen-Quebec Alex Manoogian School, Montreal, Canada, and Alex & Marie Manoogian Charter School, Southfield, MI, who will be hosting the forum.

## ԼՈՅՍ ՏԵՍԱՒ «ՀԱՃԸՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»



Հայկական ցեղասպանութեան 100 ամեակի գրականութեան Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ յուշամատեաններու շարքին իր տեղը գրաւած է նաեւ Նոր Հաճընը: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի վերահսկողութեամբ գործող հրատարակչական յանձնախումբը վերջերս հրապարակեց վերոյիշեալ շարքի 5-րդ հատորը՝ «Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը»: Գիրքը լոյս տեսաւ համատեղ մեկենասութեամբ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական համայնքներու բաժանմունքին եւ Արամ ու Ռաֆֆի Մալեաններու: Պէյրութի քաղաքապետութեան անդամ՝ ՀԿԲՄ-ի ատենապետ Արամ Մալեան եւ ՀՄՄ Պէյրութի ատենապետ Ռաֆֆի Մալեան երէկ առաւօտեան այցելեցին Անթիլիասի մայրավանք, ուր տեսակցեցան Արամ Ա. Կաթողիկոսին հետ ու ստացան հատորի առաջին օրինակները: Նշենք, որ վերոյիշեալ հատորներու խմբագրութիւնը վստահուած է բանասէր, խմբագիր եւ մատենագէտ Ժիրայր Դանիէլեանին:

«Հաճընի Ընդհանուր Պատմութիւն» գիրքը կը ներկայացնէ պատմական Հաճնոյ պատմութիւնը՝ հին ժամանակներէն մինչեւ 1939 թուական: Հատորին մէջ նախ կը բացայայտուին Հաճնոյ հին պատմական հանգրուանները մինչեւ Օսմանեան ժամանակաշրջանը եւ Գոզան-օղլուներու տիրապետութիւնը: Ապա կը բացայայտուի նորագոյն պատմական շրջանը մինչեւ 1909-ի Կիլիկիոյ ջարդերը որոնցմէ ընդհանուր առմամբ փրկուած էին հաճընցիները: Հատորը նաեւ կը բացայայտէ Ցեղասպանութեան հանգրուանը, գաղթը եւ տեղահանութիւնը, ապա Կիլիկիոյ հայերու տունդարձը եւ վերջապէս Հաճնոյ հերոսամարտը: Գիրքին մէջ նաեւ մանրամասնօրէն կ՚արծարծուի Հաճնոյ մէջ «միսիոնարներու» գործունէութիւնը, անոնց բացած դպրոցները, նաեւ ազգային վարժարաններու պատմականը, լեզուն եւ բարբառը: Յատուկ կեդրոնացում կայ նաեւ Հաճնոյ հայրենակցական միութիւններու կազմութեան եւ տարբեր քաղաքներու մէջ հաճընցիներու հաստատումին վրայ: Սոյն հատորը նաեւ լոյս կ՚ընծայէ յաւելուած մը, որուն մէջ ներառուած է Հաճնոյ հերոսամարտին գծով Կիլիկիոյ եւ միջազգային մամուլի անդրադարձը, նաեւ ընդհանուր ցանկեր՝ տեղանուններու, ազգանուններու եւ նկարներու:

## ԱՐԺԱՆԹԻՆԻ ՍԵՆԱԹԸ ՊԱՏՈՒԵՑ ՏՕՔԹ. ՏԱՆԻԷԼ ՍԹԱՄՊՈՒԼԵԱՆԸ



Պուէնոս Այրէս. Արժանթինի Սենաթը, Մարտի 13ին, 2014, իր նստաշրջանի ընթացքին առանձնայատուկ պատուի արժանացուց հանրայայտ բժիշկ եւ գաղութի ծանօթ ազգայիններէն՝ Տօքթ. Տանիէլ Սթամպուլեանը: Արդարեւ, ան այս պատուին արժանացաւ առ ի գնահատութիւն աւելի քան 50 տարիներու առողջապահական եւ բժշկագիտական բնագաւառներուն մէջ մատուցած բազմաթիւ ծառայութիւններուն: Իր նախաձեռնութեան շնորհիւ է որ Արժանթինի հիւանդանոցներուն մէջ բացուած է վարակիչ հիւանդութեանց մասնաբաժիններ: 1987ին Տօքթ. Տ. Սթամպուլեան հիմնած է Վարակիչ Հիւանդութիւններու Արժանթինեան Հիմնարկութիւնը: Ինք կարեւոր ներդրում ունեցած է նաեւ Հայաստանի առողջահութեան բնագաւառէն ներս:

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
իեռաձայնել՝ (626) 398-0506

## 2014 ՀԱՅ ՏԱՐԵՑԻՆ ՏԱՐԻՆ
## ՏԱՐԵՑԻՆ ԽՆԱՄՔԸ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԷՋ



Ուրբաթ 14 Մարտին Նիկոսիոյ Սուրբ Աստուածածին եկեղեցիին մէջ Մեծ Պահոց հսկումի երեկոյեան արարողութեան ընթացքին տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ մը՝ 2014 Հայ Տարեցի տարուան առիթով, «Տարեցին խնամքը Աստուածաշունչին մէջ» նիւթով: Նիւթը ներկայացուց Տիար Հրայր Ճէպէճեան՝ Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան Ընդհանուր Քարտուղար:

Հրայր Ճէպէճեան նախ իր երախտագիտական խօսքերը ներկայացուց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին, որ ինչպէս ամէն տարի, այս տարի ալ մեր ազգային-եկեղեցական կեանքերուն համար այժմէական եւ կարեւոր նիւթ մը մեր ուշադրութեան եւ մտածողութեան կը յանձնէ: Ան իր ելոյթը սկսաւ Վեհափառ Հայրապետին տարեցներու տարուան կոնդակին բովանդակութեան երեք գլխաւոր մասերը վեր առնելով եւ Տարեցը Աստուածաշունչին մէջ, Տարեցը Եկեղեցւոյ կեանքին մէջ եւ յարգել եւ խնամել տարեցները իր չորս ենթաբաժիններով՝ պաշտպանել, յարգել, լսել եւ խնամել տարեցները:

Հրայր Ճէպէճեան ընդգծեց՝ խնամքեի հասկացողութեան անհրաժեշտութիւնը մեկնելով Աստուածաշնչային, քրիստոնէական եւ եկեղեցաբանական տեսանկիւններէն: Ան վեր առաւ քրիստոնեայ հաւաքականութեան եւ իմմա եկեղեցւոյ առաքելութեան diakonia (սպասարկութիւն) հասկացողութիւնը, որ կը բնորոշէ եկեղեցիին նկարագիրը: Diakonia «ծառայութիւն մըն է, որ կը նպատակադրէ փոխել մարդոց կեանքերը եւ մասնակից դառնալ նուազ բախտաւոր մարդոց վիճակները բարելաւելու՝ իմմա նեղութիւն, ցաւ, հիւանդութիւն, անապահովութիւն», ըսաւ ան: «Երբ կը խօսինք յարգել եւ խնամել տարեցները կը խօսինք եկեղեցիին եւ քրիստոնեայ անհատին առաքելութեան մասին» diakonia, որ պատգամ մըն է շարժումի՝ բան մը փոխելու եւ անպայմանօրէն դէպի լաւը», ըսաւ ան:

Բանախօսը ապա վեր առաւ Աստուածաշունչի Գործք Առաքելոց 2:42-47 համարները, որ կը խօսին առաջին դարու եկեղեցիին կազմակերպութեան մասին՝ պենտեկոստէի օրը եւ, թէ ինչպէս սպասարկութեան առաքելութիւնը սկսաւ նոյնինքն եկեղեցիին ծնունդովը եւ, թէ ինչպէս եկեղեցիին անդամները «միշտ կը յարատեւէին առաքեալներու ուսուցմունքին ու հաղորդութեան, հաց կտրելու եւ աղօթելու»: Այս իմաստով ան

Շար.ը էջ 17

Ամենամեայ
ԽՐԱԽՃԱՆՔ
եւ
ՁՈՒԿԿԵՐՈՅԹ
Կազմակերպութեամբ՝
ԿԼԷՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱՃԻՒՂԻ
Շաբաթ, 22 Մարտ 2014
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
1060 N. Allen Ave. • Pasadena, CA 91104

Տոմսերու համար դիմել՝ (818) 913-9311
ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ $30.00

# ՊՈԼՍՈՅ ՆԵՐԿԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԷՆ ԵՒ ՈՉ ՄԷԿԸ ԿԸ ՓԱՓԱՔԻ ԳԱՒԱՌ ՄՆԱԼ

*ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ*

*Անցեալին Ներկայիս Պոլսոյ Պատրիարքութեան Աթոռին վրայ բազմած, պատրիարքական փոխանորդ՝ Բարձրաշնորհ Տ. Արամ Արք. Աթէշեան, հայկական մամուլին տուած իր հարցազրոյցին մէջ, բացորոշ կերպով, առանց տատամսելու եւ վարանելու, կը յայտնէ զիրար հակասող երեւոյթներ: Նախ կը փորձէ մեզ համոզել ըսելով որ «Պոլսոյ հոգեւորականները քիչ են եւ նոյնիսկ մեր եկեղեցիները չեն կրնար գոհացնել», ու ապա կ'աւելցնէ. «Պոլսոյ ներկայ հոգեւորականներէն եւ ո՛չ մէկը կը փափաքի գաւառ մնալ»:*

*Զիրար հակասող նման յայտարարութիւններ անգամ մը եւս մեզ շփոթութեան կը մատնեն եւ կը մղեն աւելի լրջօրէն խորհրդածելու այս ահաւոր անկումին դրդապատճառներու մասին, ըլլան անոնք՝ կրօնական, կրթական, ընկերային կամ քաղաքական մարզերէ ներս:*

*Սրբազան Հօր յայտարարութիւնը, ուրիշ բան չի՛ թելադրեր մեզի բացի անկէ՝ որ չկայ հոգեւորական մը որ պիտի ուզէ գաւառ մնալ: Ըստ երեւոյթին Սրբազան Հայրը, Տիգրանակերտը տակաւին կը նկատէ գաւառ, հակառակ այն իրողութեան որ այսօր Տիգրանակերտը կը նկատուի Հարաւարեւելեան Անատոլուի (Արեւմտահայաստանի՝) Այնթապէն ետք երկրորդ մեծագոյն քաղաքը, մէկ միլիոն բնակչութեամբ:*

*Պահ մը մոռնանք աշխարհագրութիւնը եւ «գաւառ» հասկացողութիւնը: Հոգեւորական չկայ որ փափաքի հոն ծառայել: Կրնա՞ք հասկնալ, սիրելի ընթերցողներ, թէ ինչ կը նշանակէ այս յայտարարութիւնը: Պարզ հայերէնով, հոգեւորական մը պիտի չուզէ Պոլսոյ մէջ իր հանգիստը խանգարել եւ երթալ ծառայելու հոն՝ ուր իսկական կարիքը կայ հոգեւոր մատակարարութեան բոլոր ժամանակներէն աւելի ԱՅՍՕՐ, երբ մանաւանդ մեր իսլամացած եղբայրներն ու քոյրերը Թախանձագին կը խնդրեն վերադառնալ հայութեան եւ մկրտուիլ Մայր Եկեղեցւոյ աւազանին մէջ: Ու՞ր ես Հայց. Եկեղեցի...:*

*Տիգրանակերտ քաղաքին մէջ գտնուող Ս. Կիրակոս եկեղեցին, որ Միջին Արեւելքի ամենամեծ եկեղեցին է, վերանորոգուելէն ետք վերաբացաւ իր դռները, դժբախտաբար սակայն ներկայիս հոգեւոր հովիւ չունի: Եկեղեցւոյ հիմնադրամի հոգաբարձուները դիմած են Պոլսոյ հայոց Պատրիարքարան, սակայն Պատրիարքարանէն տեղեկացուցած են, որ ներկայիս բաւարար թիւով հոգեւորականներ չունենալով, չեն կրնար մնայուն հոգեւոր հովիւ մը ղրկել: Նորէն հարց տանք մեր ընթերցողներուն, բաւարար թիւով հոգեւորակա՞ն չկայ, թէ փափաքող չկայ:*

*Կասկած չկայ մեր մտքին մէջ որ Պոլսոյ Պատրիարքութիւնը ինչ հսկայական զոհողութիւններով կը պահէ իր եկեղեցիները, բայց ըսել թէ չկայ հոգեւորական մը որ կը փափաքի «գաւառ»ի մէջ ծառայել՝ բացարձակապէս ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ է: Համիտեան ջարդերէն, Ատանայի ջարդերէն ու ապա 1915-ի ցեղասպանութեան արհաւիրքներէն այս կամ այն կերպով «փրկուած» մեր քրտացած ու Թրքացած եղբայրները կոչ կ'ուղղեն մեզի հոգեւոր մատակարարութիւն խնդրելով, եւ մենք ամենայն անտարբերութեամբ՝ սառնարիւն կը դիտենք անոնց հոգեւոր փլուզումը:*

*Ինչպիսի՞ արդարացում կրնայ ունենալ Արամ Սրբազանի կողմէ արտայայտուած այս տեսակէտը. «Երեւակայեցէք, եթէ ես քահանայ ուղարկեցի՝ քահանան դպրութի՞ւն պիտի ընէ թէ պատարագ մատուցանէ»: Մեր անձնական փորձառութենէն ելլելով, կրնանք քաջաբար յայտարարել որ անկարելի բան չկայ երբ նուիրում եւ կամեցողութիւն կայ: Ամերիկայի մէջ մենք նոյնը կատարած ենք տարիներով. ինչպէս Ամերիկացին կ'ըսէ «one-man show», թէ՛ պատարագած ենք, թէ՛ սարկաւագութիւն ըրած ենք եւ թէ՛ դպրաց խումբի դեր կատարած ենք միասնաբար: Հոս է նուիրումը..... Դուրս ելէք ձեր հանգիստէն այլեւս:*

*Իրեն ուղղուած հարցումին թէ ինչո՞ւ արտասահմանէն հոգեւորական չի բերեր, կը պատասխանէ հետեւեալ ձեւով. «Ես արտասահմանէն մնայուն մարդ չեմ կրնար ընդունիլ հոս. յետոյ ատիկա պետականօրէն արգիլուած է: Անոր այստեղ նստելու (մնալու) արտօնութիւն պէտք է: Բացի այդ ես այս երկրէն մարդ կ'ուզեմ՝ Թրքերէն լաւ խօսող եւ քրտերէն գիտցող մարդ: Հայաստանէն եկողը ինծի օգտակար չի կրնար ըլլալ. գաւառի համար Հայաստանէն եկողը պատարագ կ'ընէ կ'երթայ: Իսկ մեզի պէտք է մէկը, որ այդ ժողովուրդով զբաղի: Մինչեւ որ թեկնածու չըլլայ՝ այդ հարցին լուծումը չկայ»:*

*Սրբբազան Հօր կ'ուզենք յիշեցնել որ օրերը փոխուած են եւ արգելքները մեղմացած, հետեւաբար յատուկ արտօնութեամբ կարելի է հոգեւորական բերել ո՛չ միայն Ս. Էջմիածնէն, ուր թերեւս կարելի չըլլայ Թրքախօս հոգեւորական գտնել, այլեւ՝ Երուսաղէմէն եւ Անթիլիասէն, ուր կան Թրքախօս, քրտախօս, ինչպէս նաեւ ասորախօս ընտանիքներու մէջ ծնած եկեղեցականներ: Ձեր տուած պատճառաբանութիւնները արդարացուցիչ չեն, այլ ընդհակառակը դատապարտելի են, երբ լուծումներ եւ միջոցներ կան ձեր առջեւ:*

*Քաջութեան եւ նուիրումի պակասը ձեզ մղած է նաեւ յայտարարելու, որ կրօնափոխները «մահմետական մնալը կը նախընտրեն փոխանակ հայ ըլլալու»: Եթէ կան այդպիսիներ, եւ մենք քաջ գիտենք որ կան ինչ ինչ պատճառներով, բայց կան նաեւ հազարաւորներ որոնք կը փափաքին վերադառնալ իրենց արմատներուն: Հողը պարարտ է, մշակներն են վախկոտ եւ անտարբեր:*

*Այնքան ատեն որ մեր քրտացած եւ Թրքացած եղբայրները կը փափաքին վերադառնալ իրենց արմատներուն, մենք ազգովին պարտաւոր ենք գրկաբաց ընդունելու զիրենք: Թէկուզ չմկրտուին ներկայիս, գէթ հայերէն կը սորվին ճանչնալու համար իրենց պապենական մշակոյթի հարստութեան տարողութիւնը, եւ տէր կը կանգնին կիսաւեր եւ կիսաքանդ մեր կոթողական մշակութային արժէքներուն: Այս բոլորը իրականացնելու լաւագոյն եւ յարմարագոյն*

*Շար.ը էջ 18*

# ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ



*Մարտի 11-13-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, գումարուեց Գերագոյն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը՝ ընդլայնուած կազմով:*

*Ժողովի սկզբում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնութիւնը բերեց խորհրդի անդամներին այն նուիրումի եւ յանձնառութեան համար, որ նրանք դրսեւորում են Մայր Աթոռի առջեւ ծառացած խնդիրների լուծման եւ Հայ Եկեղեցու առաքելութեան առաւել արդիւնաւորման համար:*

*Ժողովի նիստերն ատենապետեցին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքութեան պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը, ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանը եւ ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը:*

*Ժողովին Նորին Սրբութիւնը ԳՀԽ անդամներին ներկայացրեց Մայր Տաճարի հիմնանորոգութեան եւ ամրակայման ուղղութեամբ ձեռնարկուած քայլերը՝ տեղեկացնելով, որ տաճարի ուսումնասիրման եւ ամրակայման նախագծային աշխատանքներն աւարտին են մօտեցել եւ առաջիկայում պիտի սկսուեն շինարարական աշխատանքները: Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ ներկայիս աշխատանքներ են տարւում նաեւ Մայր Տաճարի նորոգութեան համար անհրաժեշտ գումարի հայթայթման ուղղութեամբ:*

*2014 թ. նոյեմբեր ամսին նախատեսուած Եպիսկոպոսաց ժողովի նախապատրաստական աշխատանքների մասին ժողովականներին տեղեկութիւններ փոխանցեց ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ, ժողովի կազմակերպիչ յանձնախմբի համաատենապետ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանը: ԳՀԽ-ն գոհունակութեամբ ծանօթացաւ ժողովը նախապատրաստող յանձնախմբերի կատարած աշխատանքին եւ իր թելադրութիւնները կատարեց ժողովի օրակարգի ձեւաւորման վերաբերեալ:*

*Հայոց ցեղասպանութեան զոհերի սրբադասման ուղղութեամբ կատարուած աշխատանքի մասին*

*Շար.ը էջ 19*



# ԱՐԺԷՔԱՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՍԵՄԻՆ

THE TIMES OF THE ARMENIAN GENOCIDE Reports in the British Press V. 1, V. 2. 1914-1923, Beirut Բանաքաղութեամբ եւ Խմբագրութեամբ Քաթիա Մինաս Փելթեքեանի

*ԴՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ*

*Հեղինակը տակաւին 2000 թուականին ուսումնասիրողներու տրամադրութեան տակ դրած էր Heralding of the Armenian Genocide: Reports in The HalifaxHerald, 1894-1922 ժողովածուն, ուր վերոյիշեալ թերթին աշխատակիցները իրենց հասած սարսափելի դէպքերու ծաւալումներու մասին ղրկուած հարիւրաւոր լուրերով ու թղթակցութիւններով կ՛արձագանգէին Օսմանեան Թուրքիոյ տարածքին ընթացք առած այն աճաւոր խժդժութիւններուն մասին, որ հետագային կոչուեցաւ դարուս առաջին ցեղասպանութիւնը: Երբ կ՛ըսենք աքնանքով, յամառ ու հետեւողական աշխատանքով մէջտեղ եկած հրատարակութիւն մը՝ պէտք է մեր աչքին առջեւ ունենանք ներկայացուող զոյգ հատորները: 976 մեծադիր էջերու մէջ 1038 թղթակցութիւն եւ հաղորդագրութիւն, բոլորը պատճէնահանուած, կու գան վկայելու հայուն գողգոթային մասին՝ 1914-էն 1923 եւ ասոնք տակաւին միայն The Times, The Sunday Times եւ The Manchester Guardian թերթերու մէջ լոյս տեսածներն են: Հեղինակին առաջնային նպատակը եղած է ընթերցող եւ ուսումնասէր լայն շրջանակի մը սեղանին դնել Ա. Համաշխարհային Պատերազմին նախորդող ամիսներէն սկսեալ մինչեւ 1923 թուականի Լոզանի դաշնագիրը երկարող տարիներու ժամանակագրութիւնը, որուն մէջ ներառուած են ոչ միայն ջարդերու, տեղահանութիւններու, կողոպուտներու, առեւանգումներու սահմռկեցուցիչ նկարագրութիւնները, այլեւ Բրիտանական կայսրութեան խորհրդարանին մէջ եղած աշխոյժ քննարկումները, սրտցաւ անդամներու կոչերը օգնութեան փութալու պատերազմի ու ցեղասպանութեան արհաւիրքներուն ենթարկուող հայութեան եւ ինչու չէ նաեւ ապահով օրրան մը ապահովելու հայ ժողովուրդին համար:*

*Այսպէս օրնակ,The Manchester Guardian թերթի 1915-ի Ապրիլ 28-ի թիւին մէջ «Հայաստանի Ապագան» վերնագրով Նամակ Խմբագրին բաժնին մէջ A. S. S. անունով սրտցաւ անգլիացի մը կը գրէ գովելով Սըր Ուիլըմ Ռամզէի (Sir William Ramsay) տեսակէտը, որ կ՛առնչուի Թուրքիոյ ապագային: Սըր Ռամզէյ կարեւոր կը նկատէր նախաձեռնող եւ գործարար ոգի ունեցող հայ ազգին համար բնօրրան մը ստեղծելու անհրաժեշտութիւնը: Նամակին հեղինակը կը պնդէ որ Անտանտի երկիրներու հսկողութեան տակ դրուելիք վեց վիլայէթներու (90.000քառ. Քմ) տարածութեան վրայ պէտք է աւելցնել նաեւ Կիլիկիան: (էջ 45) Հետաքրքրական փաստ է այն իրողութիւնը, որ շատ յաճախ Հայաստանի եւ հայ ժողովուրդի հետ առնչուող լուրերը տպուած են զոյգ թերթերու առաջին էջին վրայ, ինչ որ ցոյց կու տայ մեր կացութեան հրատապութիւնը Անգլիոյ համար:*

*Յիշեցնենք թէ The Times-ը 18-րդ դարու վերջերէն տակաւին համբաւ ունէր որպէս լուրերը հարազատ կերպով փոխանցող թերթ, որ տասնեակներով թղթակիցներ ունէր ամբողջ Օսմանեան կայսրութեան տարածքին: Զարմանալի պիտի գտնեն ոմանք Անգլիական պատկան մարմիններու հետաքրքրութիւնները եւ դրական վերաբերմունքի փաստերը հայոց հանդէպ (թէեւ այդ տրամադրութիւնները հայ ժողովուրդին ջրաղացին ջուր չլեցուցին երբեւիցէ): Անգլիական մամուլին մէջ յաճախ կը յիշուին նաեւ հայերէն վրէժխնդիր ըլլալու դէպքեր, թէեւ կայսրութեան գլուխը անցած Իթթիհատականները ջանք չեն խնայեր Թուրքերուն եւ աշխարհին համոզելու թէ հայեր եւ Օսմանեան բանակին մէջ ծառայող (հաւատարիմ) հայ քաղաքացիներ իբր կը գործակցէին կամ միտք ունէին գործակցիլ թշնամիին հետ:*

*Այսպէս, 1917 Թուականի Ապրիլ 11-ին թիւին մէջ թղթակիցը կը գրէ թէ Օսմանեան բանակը մինչ անկազմակերպ կը նահանջէր դէպի Անկորա (Անքարա) եւ ռուսական զօրքերուն ձեռքը կ՛անցնէր Երզնկան, իսկ քայգերական բանակները գրեթէ ոչինչ կ՛ընէին դրութիւնը փրկելու ուղղութեամբ, Թուրք հրամանատարութեան կարգադրութեամբ կ՛ոչնչացուին 1700 հայ զինուորներ եւ վարպետ արհեստաւորներ, որոնք կ՛աշխատէին արհեստանոցներու եւ ճամբաներու վրայ: (էջ 222): Անգլիա լուրջ արշաւ կազմակերպած է հայ գաղթականներուն օգնութեան հասնելու ուղղութեամբ: Այս մասին կան առատ տեղեկութիւններ, որոնք լոյսին կը հանեն ազնուասիրտ անգլուհիներու տարած անսակարկ նուիրումին փաստերը: Փայլուն օրինակ մըն է Օրդ. Էմիլի Ճ. Ռոպինսընի պարագան: Ան Պատուոյ Քարտուղարուհին էր Հայկական Կարմիր Խաչի եւ Գաղթականներու Հիմնադրամին Լոնտոնի մէջ: Օրդ. Է. Ռոպինըն 25 Ապրիլ1917-ի թիւին մէջ սրտառուչ կոչ կ՛ընէ The Manchester Guardian-ի մէջ որ չեքերն ու այլ օգնութիւնները ղրկել նշուած հասցէին: (էջ 223):*

*Ա. եւ Բ. Հատորները կը սկսին Քաթիա Մ. Փելթեքեանի նախաբանով, որուն կը յաջորդէ հայ ժողովուրդի երեքհազարամեայ պատմութեան ժամանակագրութիւնը՝ 883 Ք. Ա. մինչեւ 29 Հոկտ. 1923 թիւը, երբ Մուսթաֆա Քեմալ հայերէն եւ այլ փոքրամասնութիւններէն զաւթուած տարածքներու վրայ յայտարարեց Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադրութիւնը: Հատորները օժտուած են նաեւ մատենագիտական ցանկով: Տարիներու քրտնաջան աղիւնքի մը առջեւ կը գտնուինք ըսելը ամբողջական պատկերը չի տար ներկայացուող երկու հատորներուն, որոնց լոյս ընծայման մէջ ոչ միայն իր ժամանակը այլեւ նիւթական աղբիւրները չէ գլացած հեղինակը, որուն լոկ փափաքը եղած է թշնամիին հետ խօսիլ փաստերու լեզուով՝ յիրաւի լուրջ անձնական ներդրում մը հայկական ցեղասպանագիտութեան բնագաւառէն ներս՝ 100 ամեակի սեմին: Լոս Անճելըս, Միացեալ Նահանգներ*

# ԱԳՈՒԼԻՍՑԻ ՅԱՅՏՆԻ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ

*ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐԵԱՆ*

*Գողթան գաւառը, մեր պատմական հայրենիքից օտարուած այդ չքնաղ տարածքը (այժմ՝ Ատրպէյճանի Նախիջեւանի ԻՀ Օրդուբադի շրջան), եղել է ոչ միայն գողթան երգիչների, այլեւ մեծն Կոմիտասի եւ աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրեանի նախնիների պատմական հայրենիքը: Ուստի պարզ է, որ դարերի ու տասնամեակների հոլովոյթում որտեղից եւ ինչպէս է ձգուել ու յարատեւել հայ երաժշտական-կատարողական արուեստի ժառանգական շղթան: Երաժիշտների գերդաստանները մի քանի տասնեակի են հասնում Գողթան գաւառում: Իսկ կործանումից երեք ամիս առաջ քաղաք այցելած գնդապետ Հասկելի ներկայացուցիչ Քլարենս Աշերը այսպէս է նկարագրել Ագուլիսը. «Եդեմական այգի՝ սանդղաւանդ մրգաստաններով ու խաղողի այգիներով... կոկիկ տներով ու նրբաճաշակ մարդկանցով, որոնք պատիւ կը բերեն ամէն մի քաղաքակիրթ հասարակութեան»: Քաղաքակրթութեան այդ հրաշք կղզին յօշոտուեց, անխնայ աւերուեց, ու նրա բնակչութեան մեծ մասը սրի քաշուեց 1919 թ. դեկտեմբերի 25-28-ին, այժմեան Օրդուբադ քաղաքի ու նրա շրջակայ գիւղերի ազերիների կողմից: Իսկ հրաշքով մազապուրծ եղածները ցրուեցին աշխարհով մէկ, սակայն երբեք չմոռացան հայրենի բնօրրանն ու կարօտը սրտներում՝ սերունդներին աւանդեցին տէր կանգնել մեր պատմական հողերին, մեր մշակութային արժէքներին...*

*Գողթան գաւառի կենտրոն Ագուլիս գիւղաքաղաքից է սերում Հախնազարեանների համբաւաւոր տոհմը: Ագուլիսի կոտորածի հետեւանքով Պարսկաստան գաղթած Հախնազարեան տոհմի շառաւիղներից առաւել յայտնին մանկավարժ, հասարակական գործիչ Յովհաննէս Հախնազարեանն է (1900-1978 թթ., փիլ. ու պատմ. գիտ. դոկտոր): Յովհաննէսի որդին է յայտնի ճարտարապետ-հետազօտող Արմէն Հախնազարեանը, ում ջանքերով Գերմանիայում հիմնադրած RAA կազմակերպութիւնը մեծ աշխատանք է կատարել Արեւմտեան Հայաստանի յուշարձանների ուսումնասիրութեան գործում, իսկ կեանքի վերջին շրջանում նա աշխատում էր ՀՀ ԳԱԱ արուեստի ինստիտուտի ճարտարապետութեան բաժնում: Ագուլիսի Հախնազարեան եւ Քալանթարեան տոհմից է սերում թիֆլիսահայ նշանաւոր նկարչուհի Գայանէ Խաչատրեանը: Մայրական կողմից Հախնազարեան տոհմից է սերում նաեւ միջազգային մրցոյթների առաջին հայ դափնեկիրներից, ՀՀ ժող. արտիստ, Մոսկուայի Չայկովսկու անուան կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնակահար Իւրի Հայրապետեանը (հայրական կողմից սերում է Գողթանի Տանակերտ գիւղի Հայրապետեան յայտնի տոհմից), նրա որդին նոյնպէս դաշնակահար է, բնակւում է Փարիզում: Նա երկար տարիներ եղել է Կոմիտասի անուան կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնամուրային ֆակուլտետի դեկան, արժանացել է «Մովսէս Խորենացի» եւ ՀՀ մշակոյթի նախարարութեան «Ոսկէ մեդալին»:*

*19-րդ դարի վերջերին Հախնազարեան տոհմի ներկայացուցիչները Ագուլիսի մէկ այլ նշանաւոր տոհմի՝ Աբէեանների հետ առեւտրական մեծ ընկերութիւններ էին հիմնել Մոսկուայում եւ մասնաճիւղեր ունէին Բաքւում, Աստրախանում, Երեւանում (որտեղ Հախնազարեանների ընդարձակ տները գտնւում էին ներկայիս «Գլաձոր» համալսարանի տեղում), Աշխաբադում, Իրանի բազմաթիւ քաղաքներում, Մարսելում: Իրենց բարեգործութիւններով այս մեծահարուստ տոհմից յայտնի են եղել յատկապէս*

*Շար.ը էջ 19*

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ
ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 94-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Կազմակերպութեամբ՝
ԱՅՆԹԱՊՑԻՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Գլխաւոր բանախօս՝
ՏՕՔԹ. ՌԱՖՖԻ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ
[illegible]
Հայրենի ճանաչուած արուեստաբան՝
ՇԱՀԷՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
Աշխարհահռչակ նկարիչ ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ յիշատակին

Կիրակի, Ապրիլ 6, 2014, կէսօրէ ետք ժամը 5:00-ին
Կլէնտէյլի Սբ. Գրիգոր Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ «Գույումճեան» սրահին մէջ
1510 E. Mountain St., Glendale, CA 91207

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ — ՍԻՐՈՎ ՀՐԱՒԻՐՈՒԱԾ ԷՔ ԲՈԼՈՐԴ

ARMENIAN AINTABTZY CULTURAL ASSOCIATION
*Presents*
THE 94TH ANNIVERSARY COMMEMORATION OF AINTAB HEROIC RESISTANCE
*Keynote Speaker*
DR. RAFFI BALABANIAN
*and*
*World Renowned Painter*
HAGOP HAGOPIAN MEMORIAL
*By Art Historian*
SHAHEN KHATCHADOURIAN

Sunday, April 6, 2014, at 5:00 p.m.
St. Gregory Armenian Catholic Church - Kouyoumjian Hall
1510 E. Mountain St., Glendale, CA 91207

RECEPTION — ALL ARE WELCOME
*Visit the Aintabtzy web page:* www.noraintab.org

# ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

*ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ*

*Մեր երկու բարբառներն ու կէսերը իրարմէ զանազանող իրողութիւններէն մէկն ալ,- մտածա՞ծ էիք այս մասին,-բառարանագրութիւնն է:*

*Արեւելահայ բառարանը կը բնորոշուի ամէն բանէ առաջ իր արտակարգ ծաւալով. վերջին կէս դարուն լոյս տեսած բառարանները կը հաշուեն մօտաւորապէս 150.000 բառայօդուած, մինչ արեւմտահայ բառարանը լաւագոյն պարագային ունի 30.000 բառ, որուն երեք քառորդը, մի՛ զարմանաք, կը մնայ անգործածելի: Այնպէս ու այն սահմաններուն մէջ, ուր մենք կը կիրարկենք մեր լեզուն, ան կը պահանջէ հազիւ 5-7.000 բառ եւ ոչ աւելի: Այս պայմաններուն մէջ մենք դիւրաւ կրնանք մեզի թոյլատրել զուտ հայեցի բառամթերք մը կիրարկելու պերճանքը, այլ խօսքով՝ խօսիլ ու գրել առանց օտար բառ փոխառելու: Մինչ արեւելահայ իրականութեան մէջ գործածելի են այդ բոլոր 150.000 բառերն ալ. անշուշտ ո՛չ բոլորին կողմէ եւ ամէն վայրկեան: Պատկերացնենք քիչ մը այն բոլոր մարզերը՝ համալսարանական տասնեակներով մասնագիտութիւններ, բանակ, դատարան, ոստիկանութիւն, արհեստներ, տնտեսութիւն, արդիւնաբերութիւն եւ այլն, որոնց ամէն մէկը ունի իր ուրոյն ու մասնագիտացած բառամթերքը՝ իւրաքանչիւրը բազմահազար միաւորներով, որոնց գումարը ահա կը հասնի ... 150.000-ի, իսկ հայերէնը այդքան բառ չունի, ոչ մէկ ատեն ունեցած է: Ասկէ ալ կը յառաջանայ օտար բառեր որդեգրելու անհրաժեշտութիւնը, որուն տարողութիւնը մենք չենք կրնար ըմբռնել: Մենք ունինք շատ իմաստուն ասացուածք մը. «Ուտողը չի գիտեր, եփողը գիտէ»: Այո՛, պէտք է եփող ըլլալ՝ գիտնալու համար, թէ պատրաստուող կերակուրը ինչպիսի՛ նիւթերու կը կարօտի: Առաջին հետեւութիւնը անշուշտ պիտի ըլլայ այն, որ արեւելահայը ստիպուած է կատարել փոխառութիւններու մեծ պաշար մը՝ լրացնելու համար իր կարիքները: Սակայն այս ալ պէտք է ըսել, որ արեւմտահայերս գայթակղեցնողը, ես պիտի ըսեմ՝ խորապէս խոցողը, չէ՛ բառային այն շերտը, որ կը պակսի մեր լեզուին եւ որուն փոխառումը անխուսափելի է. օրինակ՝ ինչպէ՞ս պիտի թարգմանենք* mrthane, rthane, chlore. hrxachlorane *եւ այսպիսի անհամար բառեր, որոնք արեւմտահայ բառարանին մէջ չեն մտներ, որովհետեւ պարզապէս պէտք չունինք այսպիսիներուն, եւ սակայն կը մտնեն արեւելահայ բարքերուն ու բառարանին մէջ: Մեր թիրախն ալ ասոնք չեն արդէն:*

*Խնդրոյ առարկան՝ այն առօրեայ տարրական բառերն են, որոնց հայերէնը մեր անմիջական տրամադրութեան տակն է եւ որոնցմէ անփութօրէն երես կը դարձնէ արեւելահայը, օրինակ՝ աբորտ-վիժում, անոնսել-յայտարարել, խլորտ-չքախումբ- իմիջ-կերպար... չեմ շարունակեր, ասոնք շատ մատնանշուած են ու շատ յիշուած, եւ ձեռքս ու աչքերս կը բողոքեն: Մանաւանդ որ ինձմէ աւելի հետեւողականութեամբ ու հմտութեամբ պայքարողներ չեն պակսիր: Ուրեմն կ'անցնիմ, այլ նպատակով ճամբայ ելած եմ ու ահա կը զառածիմ:*

***

*Յաջորդ խումբը կը կազմեն «ժողովրդա-խօսակցական» կոչուած բառերը, որոնք հարիւրներու կը հասնին, բացառուած չէ հազարն ալ, եւ որոնք մասնաւորաբար ...թրքերէն են կամ կու գան այլ լեզուէ մը: Ստորեւ նմուշներ՝ Էդուարդ Աղայեանի բառարանէն. իւրաքանչիւրին առջեւ, փակագիծի մէջ, ըսուած է «ժողովրդական».*

*խաբար-լուր, տեղեկութիւն*

*չախմախ - հրահան, կայծահան*

*չոբան- հովիւ, անտաշ, գռեհիկ*

*Անշուշտ արեւմտահայուն համար ասոնք անծանօթ բառեր չեն: Իրականութեան դէմ մեղանչած չեմ ըլլար, եթէ ըսեմ, որ տեղին համեմատ...մենք ալ կը գործածենք ասոնք եւ նմանները: Սակայն մեր բառարաններուն մէջ չենք փոխադրեր զանոնք, ոչ ալ կը սորվեցնենք, թող որ միշտ ալ ձեւ մը կը գտնենք հասկցնելու նոր սերունդին, թէ ասոնք խորթ են ու մանաւանդ...թրքերէն են, մեր կոտտացող վէրքերն են եւ պէտք է դարմանենք զանոնք: Արեւելահայ բառարանագիրը չ'ըներ այս բանը. «ժողովրդական» եւ վերջ. եւ յաջորդական սերունդները ազատօրէն կ'որդեգրեն այդ «ժողովրդական» բառերը, կ'իւրացնեն եւ կը յաւերժացնեն զանոնք: Անոնց հոգիներուն մէջ կը յաւերժանայ թրքերէնն ալ, թուրքն ալ, եւ տարին 12 ամիս Անթալիաները խուժողները մասնաւորաբար այսպիսիներն են:*

*Ու դա՛րձեալ կ'անցնիմ:*

*Կայ բառերու երրորդ խումբ մըն ալ, որ նմանապէս տեղ կը գտնէ արեւելահայ բառարաններու մէջ. ասոնք ըստ էութեան սխալ կազմութիւն ունեցող, հայ լեզուաբանութեան եւ ոգիին հակադրուող բառեր են, եւ որոնց տեղ կը տրուի սակայն, որովհետեւ...ժողովուրդը, բայց նա՛եւ մտաւորականութիւնը այդպէ՛ս կը կիրարկէ զանոնք, եւ բառարանագիրն ալ չի՛ սրբագրեր: Եւ ահա այսպիսիները հանգիստ խիղճով ու թեթեւ ձեռքով կ'անցնին նաեւ արեւմտահայ հոսհոսներուն լեզուական բարքերուն մէջ, եւ ոչ անպայման ռամիկին, այլ պեխ-մօրուք ճերմկցուցած եւ 20-30 հատորի գրական վաստակ ունեցող մտաւորականին եւ խմբագիրին եւս:*

*Ստորեւ նմուշներ՝ իրենց բացատրութեամբ, Էդուարդ Աղայեանի երկհատորէն. պատկերը նոյնն է արեւելահայ միւս բառարանագիրներուն համար եւս:*

*1. Յետայսու-սրանից յետոյ, այսուհետեւ*

*Սխալ կազմութեամբ բառ մըն է այս, որ ծնունդ առած ու այնուհետեւ որդեգրուած է ընդհանրապէս հայերէն չգիտցող, սակայն յատկապէս տարրական գրաբարը անգիտացող անձերու կողմէ: Ահա թէ ինչո՛ւ. յետ նախադրութիւնը սեռական հոլով խնդիր կը պահանջէ իր քովը, օրինակ՝ յետ մահու, յետ պատերազմի, յետ բանակցութեան եւ այլն, իսկ այսու՝ գործիական հոլով է, ուրեմն յետայսու ըսել համազօր է յետ մահով ըսելու, կամ յետ պատերազմով, կամ յետ բանակցութեամբ, ինչ որ հայերէն չէ, լեզու ալ չէ: Տեսականօրէն կարելի է ըսել՝ յետ այսր կամ յետ այսորիկ, սակայն ասոնք ալ շատ գրաբար են, չենք կրնար ետ դարձ կատարել ու գրաբար խօսիլ: Պարզ է, ուրեմն, նման բառ չունի՛ աշխարհաբարը եւ վե՛րջ: Ունինք միլիոնի պէս ընտիր ու բիւրեղի պէս մաքուր այսուհետեւ, այդուհետեւ, այնուհետեւ բառերը եւ կրնանք ազատօրէն գործածել ասոնք թէ՛ արեւմտահայերէնի, թէ՛ արեւելահայերէնի մէջ:*

*2. Ութնեակ - նոյնն է՝ ութեակ*

*Բացարձակապէս ո՛չ, նոյնը չէ՛: Բառս կազմուած է ութ եւ եակ բաղադրիչներով եւ կրնայ տալ միա՛յն ութեակ, ճիշդ ինչպէս՝ քառ-եակ>քառեակ, հինգ-եակ>հնգեակ, վեց-եակ>վեցեակ, ուրեմն նաեւ՝ ութ-եակ>ութեակ: Բայց կ'ըսենք՝ եօթնեակ, իննեակ, տասնեակ, որովհետեւ ասոնք կազմուած են հետեւեալ բաղադրիչներով՝ եօթն+եակ, ինն+եակ, տասն+եակ, այլ խօսքով՝ ասոնց մէջ երեւցող «ն» բաղաձայնները արմատական են, ինչ որ կը պակսի հինգ, վեց, ութ բառերուն:*

*3. Ցաւազրկել-ցաւից զրկել, այնպէս անել, որ ցաւ չպատճառէ*

*Ցաւազուրկ-ցաւազերծ*

*Դա՛րձեալ ոչ. ցաւը վերացնելը կամ ցաւը բառնալը զրկանք մը չէ, որպէսզի ցաւազրկել կոչենք բայը, իսկ ցաւը բարձող, ցաւը ջնջող դեղն ալ կոչենք ցաւազրկիչ, ինչպէս իր մէկ դասախօսութեան մէջ վերջերս այստեղ «բժշկագիտական» դասախօսութեան մը առթիւ Երեւան ուսանած դասախօսը կ'անուանէր կարգ մը դեղերը: Բայս պէտք է ըլլայ միա՛յն ցաւազերծել, ածականը՝ ցաւազերծ, համապատասխան դեղը՝ ցաւազերծիչ* (analgrsique )*:*

*Զուրկ եւ զրկել բառերով հայերէնը կը բնորոշէ դրական իրողութեան մը կամ վիճակի մը բացակայութիւնը կամ վերացումը, օրինակ՝ տնազուրկ, հայրենազուրկ-հայրենազրկել, ծնողազուրկ, իրաւազուրկ-իրաւազրկել եւ այլն: Բայց ո՛չ ցաւազրկել, ցաւազուրկ եւ ցաւազրկիչ. այս երեքը անհեթեթութիւններ են իբրեւ յղացք, եւ թոյլատրելի չէ, որ ասոնք գոյութիւն ունենան լեզուի մէջ, աղարտեն զայն, առաւել եւս մտնեն բառարան ու մանաւանդ...ուսուցումին:*

*Իսկ զերծ եւ զերծել բառերով կը բնորոշենք բացասական իրողութեան մը բացակայութիւնը կամ վերացումը, օրինակ՝ վնասազերծ-վնասազերծել, ականազերծ-ականազերծել, վարակազերծ-վարակազերծել, ախտազերծ-ախտազերծել եւ ուրեմն...ցաւազերծ-ցաւազերծել-ցաւազերծիչ:*

armenag@gmail.com

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ՇԱՏ ՊԱՏԱՀՈՒՄ

### ՋՈՒԱՐԹ ՖՐՈՅԵԱՆ

Շատ է պատահում,
Երբ մարդասպանն է ինձ այցի
գալիս,
Այն մարդասպանը, որ անուան-
ւում է ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ:
Գալիս է, ճզմում իմ անոյժ հո-
գին,
Մեծ պատ է շարում արեւ-լոյ-
սիս դէմ,
Ու տկարացնում մութ-կոյր խա-
ւարում:

Շատ է պատահում,
Երբ մարդասպանն է ինձ այցի
գալիս,
ԳԻԺ-ԼԱՐՈՒԱԾՈՒԻՒՆ:
Գալիս է, սուրում, պատեպատ
զարկում,
Գուքը կորցրած կոկորդս բռնում
Շնչասպառ անում անուղի ճամ-
բում:

Շատ է պատահում,
Երբ մարդասպանն է ինձ այցի
գալիս,
Այն մարդասպանը, որին ասում
ենք
ՅԻԱՍԹԱՓՈՒԹԻՒՆ:
Գալիս է անխիղճ անկոչ հիւրի
պէս,
Յիացած ժպիտս պոկոտում-
տանում
Դառնացած հոգուս ափսո-
սանք բերում:

Շատ է պատահում,
Երբ մարդասպանն է ինձ այցի
գալիս,
Այն մարդասպանը, որի անունն
է
ԹՈՅՆ ԱՏԵԼՈՒԻԹԻՒՆ:
Գալիս է զօրեղ ալիքի նման,
Յոգիս պարուրում թոյնով կա-
տաղի,
Արմատից հանում սէրը մարդ-
կային:

Չեմ ուզում գալը այն մարդս-
պանի,
Որ սեւացնում է իմ ուրախ հո-
գին,
Որ մորթոտում է առանց դա-
նակի,
Ու յետոյ նստում յաղթութեան
գահին:

Ուզում եմ, որ գայ յղի այն
լոյսը,
Որը կ'արարի սէր ու բարու-
թիւն,
Որ կը բժշկի ցաւերը հոգուս,
Ու ինձ զօրացնի բերկրու-
թեամբ խնդուն:

Որ Աստծոյ դստեր ժպիտով
բարի,
Ծով-լոյս արարեմ՝ նման օրհ-
նանքի,
Դառնամ մարդկութեան հոգու
ապաւէն,
Լինեմ իմ լաւով յուշերում յա-
ւէտ:

## ՊԱՐԶ ԲԱՆԱԼԻՆԵՐ ԼԱՒ ԻՆՔՆԱԶԳԱՑՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

*Փորձեցէք գիշերը՝ ոչինչ ուտել եւ քնանալ անօթի փորով:*

*Փորձեցէք մօտ մէկ-երկու շաբաթ եւ պիտի զգաք, թէ ինչպէս կը սկսիք աւելի թեթեւ եւ պայծառ երազներ տեսնել եւ ամէն առաւօտ արթննալ լաւ տրամադրութեամբ եւ որեւէ նոր բան ընելու ցանկութեամբ:*

*Փորձեցէք ուտելիքի մէջ չաւելցնել աղ եւ պղպեղ եւ պիտի տեսնէք, որ պիտի ուտէք երկու երեք անգամ աւելի քիչ սնունդ եւ մէկ ամիսէն դուք զգալիօրէն պիտի նիհարնաք:*

*Փորձեցէք չխմե՛լ զովացուցիչ կամ կազով ըմպելիք: Սովորութիւն դարձուցէք ջուր խմելը եւ դուք պիտի նկատէք, թէ որքան հաճելի է ջուր խմելը եւ թէ անիկա որքան լաւ կը յագեցնէ ծարաւը:*

*Փորձեցէք չխմել սուրճ եւ թէյ երկու շաբաթ, եւ դուք պիտի նկատէք, որ շրջապատի մէջ ձեզ ամէն ինչ կ'ուրախացնէ:*

*Պիտի տեսնէք, որ դուք արագ եւ խոր քուն պիտի ունենաք: Ձեր դէմքի լարուած կնճիռները պիտի հարթուին:*

*Փորձեցէք մէկ շաբաթ քալել կամ նստիլ ուղիղ եւ ձիգ իրանով եւ դուք պիտի տեսնէք, թէ ինչպէս կը բարելաւուի ձեր յիշողութիւնը եւ, որքան արագ պիտի աշխատի ձեր երեւակայութիւնը: Ամէն անգամ յիշելով այն մարդը, որուն դուք չէք սիրեր, փորձեցէք երեւակայական ձեւով որեւէ բան նուիրել անոր՝ պատկերացնելով, թէ ան ինչպէս կ'ուրախանայ, եւ դուք պիտի տեսնէք, թէ ինչպէս ան ձեզի հանդէպ աւելի ու աւելի լաւը պիտի դառնայ:*

*Փորձեցէք քնանալէ մէկ կամ երկու ժամ առաջ անջատել հեռուստացոյցն ու համակարգիչը եւ պիտի նկատէք, թէ ինչպէս կը սկսիք երեւակայել: Ձեր ստեղծագործական ունակութիւնները աւելի պիտի զօրանան:*

*Փորձեցէք մօտ երկու շաբաթ հեռախօսով խօսիլ միայն խիստ անհրաժեշտ գործերու համար:*

*Ամէն անգամ ծխախոտը վերցնելու ցանկութեան պարագային փորձեցէք վերցնել խնձորը կամ այլ միրգ մը: Երկու շաբաթ անց դուք ձեզի պիտի զգաք աւելի ամուր եւ առողջ:*

*Ամէն անգամ, երբ կ'ուզէք ընել որեւէ բան մը, որ ձեզի համար հաճելի է, բայց այնքան ալ ձեզի բնորոշ չէ, այդպիսով պիտի տեսնէք ու բացայայտէք ձեր թաքնուած ունակութիւնները:*

*Փորձեցէ՛ք ժպտալ ամէն անգամ, ժպտացէ՛ք նոյնիսկ անծանօթ մարդոց՝ չմտածելով թէ, անոնք ինչ պիտի ըսեն ձեր մասին: Եւ մէկ ամիս անց դուք մարդիկը պիտի համարէք աւելի հարազատ եւ անվտանգ ձեզի համար:*

*Փորձեցէք պառկիլ խոտերու վրայ, ծառերու մէջ՝ հեռու ինքնաշարժներէ եւ դուք պիտի զգաք ձեզի համար այդքան ցանկալի հանգստութիւնն ու լռութիւնը:*

## ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԷ՞Ս Կ'ԸՆՏՐԵՆ ԻՐԵՆՑ ԶՈՒԳԸՆԿԵՐԸ

*Միջանձնային ընտրութիւններու մեքենականութիւններէն առաջինը մերժում ստանալէ ամէն ձեւով խուսափելու մեքենականութիւնն է: Շատեր իբրեւ մտերիմ ընկեր կը փափաքին ընտրել շատ գրաւիչ մարդիկ, բայց երբ կու գայ ընտրութեան յստակ պահը, անոնք կ'իջեցնեն իրենց յաւակնութիւններու մակարդակը եւ կ'ընտրեն պակաս գրաւիչ մարդ: Այսպէս ցանկութեան եւ իրականութեան միջեւ կը յառաջանայ որոշ խզում, որուն հիմնական պատճառը մերժում ստանալու վախն է, հակում մը, որ բնորոշ է մեծ թիւով մարդոց: Այս երեւոյթը սիրոյ եւ մարդկային փոխյարաբերութիւններու ոլորտին մէջ հոգեբանական աւելի ընդհանուր օրինաչափութեան մը դրսեւորումն է. մարդոց զգալի մասը ոչ այնքան կը ձգտի հասնելու յաջողութիւններու եւ մեծ նուաճումներու, որքան մտահոգուած են ամէն ձեւով խուսափելու պարտութենէ: Մարդիկ կ'աշխատին անյաջողութեան մատնուելու հաւանականութիւնը հասցնելու նուազագոյնի:*

*Երկրորդ մեքենականութիւնը, որ կը գործէ միջանձնային ընտրութիւններու գործընթացին մէջ, մարդոց յայտնի է իբրեւ «նմանը՝ նմանին» ընտրութեան տրամաբանութեամբ: Ատիկա կ'արտայայտուի նախ եւ առաջ ըստ ընդհանուր գրաւչութեան ընտրելով իրենց նմանը: Միմեանց նման եւ մօտաւորապէս նոյն արտաքին հմայքը ունեցող մարդոց միջեւ կրնայ ձգողական ուժ յառաջանալ: Եթէ անոնք տարբեր սեռերու ներկայացուցիչներ են, ուստի կրնան մտերիմ դառնալու հակում ունենալ: Այս մեքենականութեան վրայ կառուցուող ընտրութիւնը կրնայ շատ իրատեսական ըլլալ:*

## ԼՍՈՂԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՒԵԼԻ ՏԿԱՐ Է ՔԱՆ ՏԵՍՈՂԱԿԱՆԸ

*Ամերիկացի գիտնականները պարզած են, որ լսողական յիշողութիւնը աւելի տկար է, քան տեսողականը:*

*Փորձարկման արդիւնքները ցոյց տուած են, որ փորձի մասնակիցներուն մօտ ձայնային յիշողութիւնը աւելի արագ կը մոռցուի, քան տեսողականը: Փաստօրէն ճիշդ է, երբ կ'ըսեն, որ աւելի լաւ է մէկ անգամ տեսնել քան հարիւր անգամ լսել:*

*Ասիկա կը նշանակէ, որ ուղեղը լսողական եւ տեսողական յիշողութեան ձեւաւորման ընթացքին կ'աշխատի տարբեր ուղղութիւններով:*

Վերջին Լուրերու Համար
Հայ news.am

## ԱՐՔԱՅԱԽՆՁՈՐ՝ ԱՌՈՂՋ ԵՒ ԲՈՒԺԻՉ ՍՆՈՒՆԴ

*Արքայախնձորը յայտնի է իբրեւ արեւադարձային միրգ:*

*Անիկա կ'օգտագործեն թարմ վիճակի մէջ, կը պատրաստեն պահածոներ եւ հիւթ, ինչպէս նաեւ կ'օգտագործեն քաղցրեղէնի պատրաստման ժամանակ: Արքայախնձորը ծնունդով Պրազիլէն է, կը պարունակէ 1% կիտրոնաթթու եւ այլ թթուներ, մեծ չափով վիթամին սի, ինչպէս նաեւ այլ նիւթեր:*

*Արքայախնձորի հիւթը խորհուրդ կու տան աղեստամոքսային հիւանդութիւններու ժամանակ, ինչպէս նաեւ մարսողութեան լաւացման համար: Սակայն, քանի որ արքայախնձորի հիւթը կ'աւելցնէ ստամոքսահիւթի թթուայնութիւնը, ուստի ստամոքսի եւ տասներկումատնեայ աղիքի խոցի, ինչպէս նաեւ բարձր թթուայնութեան ժամանակ անոր հիւթի օգտագործումը անհրաժեշտ է սահմանափակել:*

*Արքայախնձորը եւ անոր հիւթը օգտակար է նաեւ սրտանօթային հիւանդութիւններու եւ երիկամներու հիւանդութիւններու ժամանակ: Արքայախնձորը խորհուրդ կը տրուի սակաւարիւնութեան ժամանակ՝ օգտագործուելով իբրեւ հակալն տախտային միջոց: Արքայախնձորի հիւթը նաեւ խորհուրդ կը տրուի կեդրոնական ջղային համակարգի խանգարումներու ժամանակ:*

## ՏՂԱՄԱՐԴՈՒ ԵՒ ԿՆՈՋ ՈՒՂԵՂԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

*Շատերը արդէն կը կասկածէին, որ տղամարդոց եւ կանանց ուղեղները տարբեր են: Այժմ հետազօտողները պարզած են անոնց ամենամեծ տարբերութիւնը:*

*Աւելի քան 20 տարի իրականացուցած հետազօտութիւններէ ետք գիտնականները կրցած են քարտէզ ստեղծել, որ ցոյց կու տայ, թէ որքան կը տարբերի հակառակ սեռի ներկայացուցիչներու գանկատուփերու պարունակութիւնը:*

*Հետազօտութիւնը ընտրած է 218 տարբեր ուսումնասիրութիւն: Հաստատուած է, որ տղամարդոց ուղեղի ծաւալը 8-13 տոկոսով աւելի մեծ է, քան կանանց ուղեղը:*

*Առաւել մանրամասն դիտարկելէ ետք յայտնաբերած են, որ տարբերութիւնները կապուած են քանի մը հանգամանքներու հետ: Անոնցմէ են յոյզերու եւ լեզուային համակարգի համար պատասխանատու հատուածները:*

*Փորձագէտները կ'ենթադրեն, որ հետազօտութիւնը կրնայ ազդել աութիզմի եւ ճնշումներու հետագայ ուսումնասիրութիւններուն վրայ: Անիկա կրնայ օգնել հասկնալու սեռական տարբերութիւնները, սեռի հետ կապուած հոգեկան հիւանդութիւնները:*

## ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԱՊԱՑՈՒՑԱԾ ԵՆ, ՈՐ ԼԱՒ ԻՆՔՆԱԶԳԱՑՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՆԵՐԸ ՊԷՏՔ Է ԱՒԵԼԻ ՇԱՏ ՔՆԱՆԱՆ ՔԱՆ ՏՂԱՄԱՐԴԻԿ

*Հետազօտութեան մասնակցած են 210 առողջ, չծխող եւ դեղորայք չընդունող տղամարդիկ եւ կանայք: Մէկ ամսուան ընթացքին գիտնականները արձանագրած են գիտափորձի մասնակիցներու քունի որակն ու տեւողութիւնը, ինչպէս նաեւ զգացմունքային վիճակը: Քունի պակասը կանանց մօտ արտայայտուած է թշնամութեամբ եւ յարձակողական վիճակով: Մասնագէտներու հաշուարկով, ուժերը վերականգնելու համար կանայք պէտք է 20-90 վայրկեան աւելի քնանան:*

*Ուսումնասիրութեան իբրեւ արդիւնք գիտնականները եզրակացուցած են, որ քունի պակասը պատճառ կը դառնայ սիրտանօթային հիւանդութիւններու եւ ճնշախտի, ինչպէս նաեւ շաքարախտի յառաջացման: Նման կախուածութիւնը կանանց մօտ կը նկատուի առաւել ուժեղ, քան տղամարդոց:*

---

## ՏԱՐԵՑԻՆ ԽՆԱՄՔԸ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԷՋ

*Շարունակուած էջ 13-էն*

*ընդգծեց, թէ քրիստոնեային եւ եկեղեցիին «խնամքին»ի հասկացողութիւնը «համապարփակ» է եւ կ'ընդգրկէ ուսուցմունք, հաղորդականութիւն, գործնական հոգածութիւն, խնամք եւ աղօթք: Այս համապարփակ խնամքը «սքանչելիքներ եւ նշաններ» ստեղծեց եւ երբ կերակուրը կը բաժնէին եւ կ'ուտէին «ցնծութիւն եւ պարզամտութիւն» կար եւ իրենց աղօթքներով «շնորհք կը գտնէին»:*

*Հրայր Ճէպէճեան այս իմաստով կեդրոնացաւ քրիստոնէական խնամքին ուղղահայեաց եւ հորիզոնական հասկացողութիւններուն վրայ: Ուղղհայեացը, որ Աստուծոյ հետ յարաբերութեան հասկացողութիւնն է իւրաքանչիւր քրիստոնեային եւ, որուն ուժով եւ հաւատքով կ'ապրի անհատը հորիզոնական հասկացողութեամբ իր շրջապատին հետ: «Քրիստոնեայ ըլլալ կ'ենթադրէ շատ աւելին քան միայն անձնական եւ փոխուող յարաբերութիւն ունենալ Աստուծոյ հետ: Այդ կ'ենթադրէ հաւաքկան կեանքին մէջ մտնել եւ փոխուող ու խնամող յարաբերութիւն ունենալ աշխարհին հետ՝ ներառեալ տարեցին հետե, եզրափակեց ան:*

*Նիւթը՝ իր աժմէական մտահոգութիւններով եւ հասկացողութեամբ գնահատանքի արժանացաւ ներկաներուն կողմէ: Նոյն դասախօսութիւնը կրկնուեցաւ Կիրակի 16 Մարտին Սուրբ Աստուածածին եկեղեցիին պատարագին ընթացքին:*

*Ներկայ մը*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՔ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԷԿ ԲԵՄԻ ՎՐԱՅ

*Շարունակուած էջ 1-էն*

տան-Թուրքիա սահմաններու բացման հարցերու ինչպէս նաեւ Ցեղասպանութեան Հարիւրամեակի առիթով կարելի ձեռքբերումներու գծով մեր ժողովուրդի ակնկալութիւններուն հետ:

Ինչ աշխատանք կը տանէին մեր աւանդական կուսակցութիւնները առանձին առանձին կամ հաւաքաբար, միջազգային մակարդակի վրայ Արցախի հանրապետութեան ճանաչման հրատապ հարցով: Կը կարծուի՞ թէ մեր պահանջատիրութիւնը կրնայ արդիւնաւորուիլ Ցեղասպանութեան հարիւրամեակի առիթով: Ի՞նչ էր իրենց կեցուածքը Հայաստանի, Ռուսիոյ մաքսային ընկերակցութեան մէջ ներգրաւման համաձայնութեան հանդէպ: Ի՞նչ աշխատանք կը տանէին հայապահպանման կապակցութեամբ: Ի՞նչ կ'ընէին մեր կուսակցութիւնները մեր նոր սերունդներու ազգային կեանքին կապելու եւ վերջապէս մեր բաժանեալ Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցիներու միացումին համար:

Փոխանակ թղթակցային նկարագրութիւններու մէջ ներգրաւուելու, մեր ղեկավար կուսակցական ընկերներուն՝ առանձին առանձին առաջուած հարցումներուն ու անոնց տուած պատասխաններուն, լուսաբանութիւններուն ու ընդհանրացումներուն մէջ մտնելու, այդ բաժինը անշուշտ կը լրացնեն մեր թղթակիցները, մենք պիտի բաւարարուինք կարգ մը հաստատումներ կատարելով, հաստատումներ, որոնք, նաեւ, ջերմ արտայայտութիւն գտած էին ասուլիսին ներկայ հասարակութեան մօտ:

Մեր ներկայ յօդուածի նախաբան խօսքին մէջ Պոլսահայ ներկայ նախաձեռնութիւնը բնորոշեցինք իւրայատկութեամբ:

Արդարեւ, սա, հրապարակային առաջին ձեռնարկը կարելի է համարել, ուր մեր երեք աւանդական կուսակցութիւնները, առաջին անգամ ըլլալով, բեմ կը բարձրանային, իրենց ծնունդ տուած հայ ժողովուրդին հանդէպ իրենց ունեցած հաշուետուի գիտակցութեամբ եւ պատասխանատուութեամբ, զեկուցելու իրենց նախաձեռնած առաքելութիւններուն եւ արձանագրած ձեռքբերումներուն մասին, վերի պարբերութիւններուն մէջ մեր ազգը յուզող ընդհանրական բնոյթի հրատապ հարցերու կապակցութեամբ: Մեր երեք պատասխանատու զեկուցողները, իւրաքանչիւրը, ամենայն լրջութեամբ, անկեղծութեամբ եւ համոզուածութեամբ, պարզ ու մեկին ներկայացուցին իրենց կուսակցութեան ծննդեան եւ կազմակերպման պատմականը, գաղափարախօսութիւը, առաքելութիւնը եւ իրենց ներկայացուած հարցերու վերաբերեալ իրենց ունեցած դիրքորոշումը, սկսած՝ արտագաղթէն մինչեւ մեր Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցիներու միացումը:

Երկրորդ հաստատում որպէս, կ'արձանագրենք այն, որ մեր աւանդական կուսակցութիւնները ունենալով հանդերձ գաղափարախօսական շօշափելի տարբերութիւններ, ըլլան անոնք ընկերային կառոյցի, տնտեսական համակարգի, քաղաքական արեւելումի եւ ռազմավարական տարբերութիւններու, որպէս ազգային կազմակերպութիւններ ծնունդ առած են յանուն հայ ազգի գոյութեան պաշտպանութեան, պահպանման եւ հայրենիքի անկախութեան: Իւրաքանչիւր հատուած իր ծառայութիւնները մատուցած է անմնացորդ նուիրումով, հետեւողական պայքարով ու զոհաբերութեամբ:

Անակնկալի մատնուած հարցազրոյցին ներկայ հասարակութիւնը տեսած էր, թէ երեք կուսակցութիւններու ներկայացուցիչները՝ ներկայացուած բոլոր հարցադրումներուն տուած պատասխանները, համարեա նման էին իրարու: Արտագաղթի առաջքը պիտի առնուէր կենսամակարդակի բարելաւումով: Թուրքիա-Հայաստան սահմաններու բացումը պէտք է ըլլար անպայմանադրական: Մաքսային տեսակէտով ի նպաստ Ռուսիոյ դիրքորոշումը նպաստաւոր էր Հայաստանին: Հատուածական, առանձնակի կուսակցութեան մը կողմէ պահանջատիրական պայքարը արդիւնք չէր կրնար տալ: Համագործակցութիւնը հրամայական է: Անհրաժեշտ աշխատանք պէտք է տարուի վերջակէտելու համար մեր Ուղղափառ Եկեղեցիներու բաժանուածութիւնը: Ժողովրդավար համակարգը պէտք է գերիշխող դառնայ հայրենիքէն ներս: Մեծ կարեւորութիւն տրուի նոր սերունդներու հայապահպանութեան գործընթացին:

Եզրակացնելով մեր նշումները, դիտել կ'ուզենք տալ, որ ցանկալի է որ հարցազրոյցի ընթացքին դրսեւորուած միջ-կուսակցական միասնական մօտեցումը դառնայ տիրական մեր գործնական կեանքէն ներս, որպէսզի մեր ազգի առաջ բրգացած ընդհանրական բնոյթի հարցերու լուծումը հետապնդենք միասնական ոգիով: «Այս ոգին է փնտռուածը մեր ժողովուրդի 98 % -ը կազմող լուռ մեծամասնութեան կողմէ» պիտի յուշէր ականջիս, սրահէն երբ դուրս կ'ելլէի վերոյիշեալ ձեռնարկէն խանդավառ շատ յարգելի սրտցաւ ազգային մը, որ արժանաւորապէս կը վարէր հայրենակցական միութեան մը ատենապետութիւնը:







## «ԶՈՒԱՐԹՆՈՑ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

*Շարունակուած էջ 8-էն*

*ձեռնարկ.*

*ա.- 6 Ապրիլ 2014-ին, ցեղասպանութեան 99-րդ տարելիցին առթիւ դասախօսութիւն՝ գեղարուեստական յայտագրով. դասախօսն է ցեղասպանագէտ Փրոֆ. Դոկտ. Մէյհան Պալրագտար:*

*բ.- 7 Մայիս 2014-ին կը սկսի ցեղասպանութեան զոհ գացած հայ գրագէտներու նուիրուած գրական ձեռնարկներու շարք մը: Առաջինը նուիրուած է մեծ գրագէտ, մտաւորական, երեսփոխան, իրաւաբան եւ ազգային կարկառուն դէմք Գրիգոր Զօհրապին: Այս շարքի երկրորդ երեկոն տեղի պիտի ունենայ 9 Յուլիսին՝ նուիրուած Սիամանթոյին եւ Ռուբէն Զարդարեանին:*

*«Զուարթնոց» Մշակութային Յանձնախումբի անդամներն են.-*

*Առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեան Նախագահ*

*Տօքթ. Սիմոն Սիմոնեան Ատենապետ*

*Դոկտ. Յովհաննէս Գուլաք Աւետիքեան Փոխ-ատենապետ*

*Դոկտ. Մինաս Գոճայեան Ատենադպիր*

*Տիկ. Լենա Սիմոնեան Քարտուղարուհի*

*Պրն. Աւետիս Մարգարեան Գանձապահ*

*Տօքթ. Յարութիւն Եաղսըզեան Խորհրդական*

*Տիկ. Մելինէ Աղաճանեան Խորհրդական*

*Պրն. Փիթըր Տարագճեան Խորհրդական*

*Տիկ. Ալիս Իսկէնտէրեան Խորհրդական*

*Պրն. Վահէ Իսկէնտէրեան Խորհրդական*

*Տիկ. Լուսի Թաշճեան Խորհրդական*

## Հ.Բ.Ը.Մ.Ի ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

*Շարունակուած էջ 8-էն*

*կաւորման խնդիրները խորհրդածութեան նիւթ պիտի ըլլան, ուսուցողական կարողութիւնները ճկուն եւ այլ մարզերու մէջ եւս օգտագործելի դարձնելու նկատառումով:*

*Հ.Բ.Ը.Միութեան վարժարանները կը գործակցին Հ.Բ.Ը.Մ.ի Հեռավար Գոլէճին (www.avc-agbu.org) հետ, օգտագործելով անոր հայ լեզուի, պատմութեան եւ մշակոյթի համացանցային բազմալեզու ծրագիրները, առանց դասաւանդումները եւ ստեղծագործական ճարտարարուեստի ընձեռած եւ շարունակաբար ընդարձակուող կարելիութիւնները: Համագումարի մասնակիցները առիթ պիտի ունենան ծանօթանալու Հեռավար Գոլէճի նոր ծրագիրներուն, որոնց շարքին արդէն գործադրութեան դրուած են ճատրակի դասընթացքը եւ ամէն եռամսեայ հրապարակելի ելեքտրոնային գիրքերու շարքը՝ հայ մշակոյթի եւ պատմութեան վերաբերեալ հարուստ նիւթերով:*

*Համագումարին մասնակցող Հ.Բ.Ը.Մ.ի Հիւսիսային Ամերկայի դպրոցներն են՝ Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան, Քանոկա Փարք, Գալիֆորնիա, Վաչէ եւ Թամար Մանուկեան Փասատինայի երկրորդական Վարժարան, Գալիֆորնիա, Արմէն-Քէպէք Ալեք Մանուկեան Վարժարան, Մոնթրէալ, Գանատա, եւ Ալէքս եւ Մարի Մանուկեան Զարթըր Վարժարան, Սաութֆիլտ, Միչիկըն, որ կը հիւրընկալէ համագումարը:*

## ՊՈԼՍՈՅ ՆԵՐԿԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԷՆ

*Շարունակուած էջ 14-էն*

*վայրը Ս. Կիրակոս Եկեղեցին է իր բոլոր առաւելութիւններով:*

*Տիգրանակերտի քաղաքական այժմու պայմանները ի նպաստ մեզի են, նամանաւանդ որ այդքան «բարեացակամ» վերաբերմունք ցոյց կու տայ քաղաքապետը եւ կոչ կ'ուղղէ հայութեան որ գան իրենց երբեմնի հայրենիքը եւ տէր կանգնին իրենց արդար իրաւունքներուն: Ինչպէ՞ս կրնանք անտարբեր մնալ նման կոչի մը, երբ մեծ ակնկալութեամբ մեզի անպայման կը սպասեն մեր քրտացած եւ թրքացած եղբայրներն ու քոյրերը:*

*Նոյնքան եւ առաւել եւս նման հարցի մը սատարելու պարտականութիւնը կ'իյնայ մեր բոլոր Նուիրապետական Աթոռներուն, մեր բոլոր կուսակցութիւններուն եւ կազմակերպութեանց վրայ: Հայ Դատի մեծագոյն դաշտերէն մէկն է այսօր Տիգրանակերտը եւ անհրաժեշտօրէն համազգային գերագոյն ճիգերով պէտք է հասնինք հոն՝ ուր արեան կանչը մեզ կ'առաջնորդէ:*

*Չենք կրնար անտարբեր մնալ. անյապաղօրէն պէտք է ձեռք երկարել Պոլսոյ Պատրիարքութեան, երբեմնի արեւմտահայութեան մէջ իր կատարելիք հոգեւոր եւ կրթական անմիջական խոշոր կարիքներուն:*

*Վերջին եղբայրական թելադրութիւն մը եւս: Արամ Սրբազան, մի՛ ըսէք. « Մենք ոչ մէկ պահանջք չունինք Թուրքիոյ կառավարութենէն: Ատիկա Հայաստանի եւ Սփիւռքի գործն է: Ես միայն իմ եկեղեցիներուս ձեռքէն առնուած կալուածները կը պահանջեմ եւ սա 1915 թուականի հետ կապ չունի»: Սա ինքնախաբէութենէն դուրս եկէք եւ ճշմարտութիւնները մի՛ խեղաթիւրէք: Մեզի ծանօթ են Պոլսոյ պատրիարքութեան դժուարութիւնները քաղաքական վերին մարմիններու հետ, բայց մի քօղարկէք ճշմարտութիւնները:*

*Հայ ժողովուրդը միահամուռ մէկ դատ ունի: Մեր բոլորին դատերն ալ միաձուլուած են եւ խառնուած մեր պապերու արեան կանչին հետ եւ չկայ առանձին դատ. կայ ու կայ միայն ազգային մէկ դատ եւ այդ պահանջատիրութեան մէկ ձայնը Պոլսոյ պատրիարքութեան ձայնն է անկասկած, գլխաւորաբար Հայաստանի՝ որպէս պետութիւն, ապա նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին (որպէս պահանջատէրը Կիլիկիոյ հայութեան եւ աթոռապատկան նիւթական, հոգեւոր ու բարոյական կապտուած հարստութիւններուն), եւ քաղաքական կազմակերպութիւններու ձայնին առընթեր:*

**www.massispost.com**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



ԹՐՎԱՆՏԱ ՁԼՏՐԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ գերեզմանօրհնէք պիտի կատարուի հանգուցեալի շիրիմին մօտ, կիրակի, Մարտ 23, 2014ին, առաւօտեան ժամը 11:00ին:

Խնդրողներն են՝

Զաւակները՝ Վարդիվառ եւ Ովսաննա Ձլտրեան եւ զաւակունք

Յարութիւն եւ Գայեանէ Մովսէսեան եւ զաւակունք

Գրիգոր Ձլտրեան եւ զաւակունք

Ադելինա Ձլտրեան եւ զաւակունք

Ազատուհի եւ Հայրկ Բադոյեան

Յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

## ԱԳՈՒԼԻՍՑԻ ՅԱՅՏՆԻ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ

Շարունակուած էջ 15–էն

Սարգիս եւ Յարութիւն Հախնազարեանները: Հայ մշակոյթին, մանկավարժութեան եւ գիտութեան բնագաւառում զգալի ծառայութիւններ են մատուցել Մարտիրոս եւ Յովհաննէս Հախնազարեանները: Կոմիտասի անուան կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնակահար Սերգէյ Քեչեկը եւ Իւրի Հայրապետեանի մայրն ու Սուրէն Հախնազարեանի հայրը՝ քոյր ու եղբայր են: Քեչեկի երկու որդիները եւս դաշնակահարներ են, բնակւում են Ճապոնիայում եւ Բէյրութում:

Եւ, վերջապէս, հանրաճանաչ թաւջութակահար Նարեկ Հախնազարեանը՝ Հախնազարեան տոհմի շառաւիղը, ծնուել է Երեւանում: Նարեկի հայրը՝ ջութակահար Սուրէն Հախնազարեանը, երկար տարիներ հանդէս է եկել Կոմիտասի անուան լարային քառեակի կազմում, մայրը՝ Գայեանէն, կոնսերվատորիայի պրոֆեսոր է: Եղբայրներից Լեւոնը նոյնպէս դաշնակահար է (ապրում է Գերմանիայում), Տիգրանը ՌԴ Կոմիի Հանրապետութեան օպերային թատրոնի գլխաւոր դիրիժորն է: Սուրէն Հախնազարեանի հայրը՝ Հայրապետը (Նարեկի պապիկը), հօրաքոյրը՝ Հրաչուհին, ժամանակին աւարտել են կոնսերվատորիան, սակայն ստանալով նաեւ ինժիներական կրթութիւն, զբաղուել են երկրորդ մասնագիտութեամբ: Հօրեղբայրը՝ Արամ Հախնազարեանը, երկար տարիներ եղել է Ալ. Սպենդիարեանի անուան երաժշտական դպրոցի ջութակի ճանաչուած դասախօս, նրա դուստրը՝ Ռիտա Հախնազարեանը, Արցախի կամերային նուագախմբում ալտահար է, իսկ որդին՝ Խաչատուր Ալմազեանը, Բելգիայում ղեկավարում է իր հիմնած «Almazians Obsessin» համոյթը:

Տոհմիկ երաժիշտների ընտանիքում մեծացող Նարեկը նախնական երաժշտական կրթութիւնը ստացել է Երեւանի Սայաթ-Նովայի անուան երաժշտանոցում՝ պրոֆեսոր Զարեհ Սարգսեանի դասարանում: Այնուհետեւ ուսումը շարունակել է Մոսկուայի կոնսերվատորիայում՝ պրոֆեսոր Ալ. Սելեզնեովի ղեկավարութեամբ: Նարեկը Մոսկուայի կոնսերվատորիայի ասպիրանտ է: Պրոֆեսորներ Սելեզնյովի եւ Լորենս Լեսսերի (Բոստոնի New England Conservatory) ուսանող Նարեկն ընդգրկուել է Բոստոնի կոնսերվատորիայի հեղինակաւոր Artist Diploma ստանալու ծրագրում: Նա միջազգային մի շարք մրցոյթների դափնեկիր է, Չայկովսկու անուան 14-րդ մրցոյթում արժանացել է առաջին մրցանակի, ոսկէ մեդալի եւ երկու յատուկ պարգեւների: Կորեայում Geongman միջազգային երիտասարդ կատարողների մրցոյթում ստացել է առաջին մրցանակը: Իսկ 2007-ին, Խաչատրեանի անուան միջազգային մրցոյթում արժանացաւ առաջին մրցանակին եւ ոսկէ մեդալի: Նարեկ Հախնազարեանի կատարողական արուեստի մասին բազմիցս գրուել է համաշխարհային մամուլում: 25-ամեայ երաժիշտին փայլուն ապագայ են կանխատեսում, եւ նրա ամէն մի ելոյթ՝ լինի դա հայրենիքում թէ օտար բեմերում, մշտապէս արժանանում է շատ ջերմ ընդունելութեան: Երիտասարդ թաւջութակահարի համար իր բազմաթիւ մրցանակներից, մեդալներից առաջինը, ինչպէս Նարեկն անկեղծացաւ՝ ՀՀ Նախագահի մրցանակն է: «Այդ մրցանակը պարտաւորեցնող է, որ էլ աւելի նուիրումով աշխատեմ ու իմ երաժշտասէր հանդիսատեսին ներկայանամ»: Նարեկը աչքերը փակ է նուագում, սակայն ամբողջովին զգում է դահլիճի շունչը, ոգեւորւում ու ունկնդիրներին նուիրում հրաշալի կատարում, արժանանում բրաւօ, բիս» բացականչութիւնների: Նա պատւով է կրում տոհմիկ երաժիշտների հինգերորդ սերունդը լինելու պատիւը:

Յ.Գ. յատուկ շնորհակալութիւն փիլ. գիտ. թեկնածու Սարգիս Հայրապետեանին՝ «Տոհմաբանութիւն» աշխատութիւնից օգտուելու համար:

## ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ

Շարունակուած էջ 14–էն

զեկոյց ներկայացրեցին Հայ Եկեղեցու Սրբադասման յանձնախմբի համատենապետ, Տաւուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսեանն ու յանձնախմբի անդամ, Մայր Աթոռի Եկեղեցական հայեցակարգային հարցերի բաժնի տնօրէն Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանեանը: Ժողովականները, գնահատանք յայտնելով յանձնախմբին, անդրադարձան սրբադասման կանոնի, սրբապատկերի եւ վկայաբանութեան պատրաստման գործընթացին, ինչպէս նաեւ սրբադասման հռչակման հետ կապուած մանրամասներին:

Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գումարման մասին զեկոյց ներկայացրեց Մայր Աթոռի դիւանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը: ԳՀԽ-ն որոշեց ժողովը գումարել տարուայս սեպտեմբեր 7-ից 9-ը՝ նախանշելով ժողովի օրակարգը: Այս առնչութեամբ խորհուրդը քննութեան առաւ նաեւ Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսեանի գլխաւորած յանձնախմբի կողմից մշակուած Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կանոնադրութեան նախագիծը եւ թելադրեց այն լրամշակումից յետոյ ներկայացնել ժողովի վաւերացմանը:

Գերագոյն հոգեւոր խորհրդին Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին նուիրուած Մայր Աթոռի միջոցառումների վերաբերեալ զեկոյց ներկայացրեց յանձնախմբի ատենապետ, ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը: Քննարկման արդիւնքում ամբողջացուեց Մայր Աթոռի կողմից իրականացուելիք միջոցառումների ցանկը, որով մասնակցութեամբ Ամենայն հայոց Հայրապետի, յիշատակի արարողութիւններ կը կազմակերպուեն աշխարհասփիւռ հայաշատ համայնքներում, միջեկեղեցական համաժողովներ եւ աղօթքի էկումենիկ արարողութիւններ, ինչպէս նաեւ տեղի կ՚ունենան երիտասարդական միջազգային կրօնաժողովներ, թեմերում կ՚իրականացուեն Եղեռնի վերաբերեալ փաստագրական նիւթերի ցուցադրումներ եւ այլ նմանօրինակ միջոցառումներ: Ժողովականներն իրենց գնահատանքը յայտնեցին յանձնախմբին՝ յանձնարարելով շարունակել միջոցառումների կազմակերպման աշխատանքները:

Գերագոյն հոգեւոր խորհուրդը մասնաւոր քննութեան առաւ 2015 թ. կայանալիք Միւռոնօրհնութեան արարողութեան հետ կապուած հարցեր: Այդ առնչութեամբ Մայր Աթոռի դիւանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը տեղեկացրեց, որ Վեհափառ Հայրապետի կողմից ստեղծուած յանձնախումբն արդէն սկսել է Միւռոնօրհնութեան նախապատրաստական աշխատանքները: Այս կապակցութեամբ Գերագոյն հոգեւոր խորհուրդը թելադրեց յանձնախմբին ձեռնամուխ լինել Միւռոնօրհնութեան առիթով Քոյր Եկեղեցիներին հրաւէրների առաքմանը եւ յորդորեց Սփիւռքի թեմերի առաջնորդներին խրախուսել ժողովրդին՝ մասնակցելու ազգային-եկեղեցական կեանքում այս կարեւոր իրադարձութեանը:

Ժողովականներին ներկայացուեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունէութեան 2013 թ. տարեկան հաշուետուութիւնը, որում անդրադարձ է կատարուած անցնող տարում հայրապետական ընդունելութիւններին ու այցելութիւններին, ներեկեղեցական եւ միջեկեղեցական ասպարէզներում իրագործուած ծրագրերին, Մայր Աթոռի միաբանութեանը, Եկեղեցու քարոզչական, կրթադաստիարակչական եւ սոցիալական առաքելութեանը: Մասնաւորապէս տեղեկացուեց, որ 2013 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ունեցել է շուրջ 70 պաշտօնական հանդիպումներ եկեղեցական ու պետական բարձրաստիճան պաշտօնեաների ու պատուիրակութիւնների հետ: Նշուած տարում Վեհափառ Հայրապետն այցելել է Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ Հայոց Արեւելեան, Ֆրանսիայի, Շուէյցարիայի, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմեր՝ մասնակցութիւն բերելով հոգեւոր-մշակութային տարբեր ձեռնարկումներին եւ իր հայրական օրհնութիւնը բաշխելով Եկեղեցու հաւատաւոր զաւակներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եկեղեցականութեան թիւը 676 է, որոնցից 53-ը՝ արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 46-ը՝ ծայրագոյն վարդապետ եւ վարդապետ, 50-ը՝ աբեղայ, 421-ը՝ քահանայ, 106-ը՝ սարկաւագ, ովքեր ծառայում են Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցու տարբեր թեմերում եւ կառոյցներում: ՀՀ Զինուած ուժերում իրենց ծառայութիւնն են բերում թուով 47 հոգեւոր սպասաւորներ: Մայր Աթոռի հովանու ներքոյ գործող հոգեւոր-կրթական հաստատութիւններում՝ Գեւորգեան հոգեւոր ճեմարանում, Սեւանի Վազգենեան հոգեւոր դպրանոցում եւ Հառիճավանքի Թրբանճեան ընծայարանում, սովորում է 219 ուսանող եւ աշակերտ: Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հովանաւորութեամբ գործող 7 Հայորդեաց տները, ուր յաճախում են աւելի քան 3000 երեխաներ եւ պատանիներ, 2013 թ. եկեղեցական, ազգային եւ պետական տօների առիթներով կազմակերպել են 176 բազմաբնոյթ միջոցառումներ:

Շարունակուել են Մայր Աթոռի կողմից իրականացուող սոցիալական ծրագրերը, որոնց առաւել համակարգման նպատակով Մայր Աթոռում ստեղծուել է նաեւ Սոցիալական ծառայութեան գրասենեակ: 2013 թ. սեպտեմբեր ամսին գումարուած Եպիսկոպոսաց ժողովի կողմից հաստատուել է 2 000 000 ԱՄՆ դոլարի նախնական դրամագլուխ ունեցող հիմնադրամ՝ Հայաստանի, Արցախի եւ սիրիահայութեան կարիքաւոր զաւակներին աջակցութիւն ցուցաբերելու համար: Տեղեկացուեց նաեւ, որ տարուայ ընթացքում Մայր Աթոռը շարունակել է պարբերաբար օգնութիւն ցուցաբերել ինչպէս Սիրիայի հայ համայնքին եւ ազգային հաստատութիւններին, այնպէս եւ Հայաստանում ապաստան գտած սիրիահայ ընտանիքներին:

Ժողովի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեղեկացրեց Գերագոյն հոգեւոր խորհրդի նոր անդամների՝ Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Բեքչեանի, Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի Առաջնորդ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարեանի եւ Մեծ Բրիտանիայի հայոց թեմի Առաջնորդ Տ. Վահան Եպիսկոպոս Յովհաննիսեանի նշանակման մասին՝ Տ. Տաթեւ Արքեպիսկոպոս Ղարիբեանի, Տ. Նորուան Արքեպիսկոպոս Զաքարեանի, Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեանի եւ ի Տէր հանգուցեալ Տ. Աղան Արքեպիսկոպոս Պալիոզեանի փոխարէն: Նորին Սրբութիւնն իր գնահատանքը յայտնեց ԳՀԽ նախկին անդամներին խորհրդի կազմում իրենց նուիրեալ եւ օգտակար ծառայութեան համար:

ԳՀԽ ժողովի ընթացքում քննարկուեցին նաեւ Ֆրանսիայի, Կանադայի, Շուէյցարիայի, Բրազիլիայի, Վիրահայոց թեմերին, Հոլանդիայի ու Բելգիայի հայ եկեղեցական համայնքներին վերաբերող հարցեր, ինչպէս նաեւ կարգապահական խնդիրներ:

# ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ... ԴԱՐՁԵԱ՛Լ ՊԱՏԵՐԱԶՄ

*Շարունակուածէջ6-էն*

*Անատոլիոյ չարժումը ղեկավարելու համար անգլիացիներու հետ բանակցութիւններ վարած է, Մուսթաֆա Քեմալին եւ որոշ իթթիհատականներու նամակներ գրած է:*

*... Երկու ժամ գետին փռուած Թալեաթ-դիակի գրպանէն «Մեհմետ Սալի» անունով անձնագիր յայտնաբերուած էր, սակայն անոր ինքնութիւնը մերձակայքին մէջ ծխախոտի առեւտուր ընող նախկին իթթիհատականներ դոկտոր... Նազըմն ու դոկտոր Պէհաետտին Շաքիրը հաստատած են: Մարմինը տարած են դիահերձարան, զմռսած եւ ժամանակաւորապէս թաղած են Նոյքէօլնի Թուրքական գերեզմանոցը: Ահա այսպէս, "զարմանալի պատահականութեամբ" գերմանական արդէն անամպ երկինքին տակ եւ անգլիացիներու աչալուրջ հսկողութեան ներքոյ "լուսաւորեալ Եւրոպայի ճիշտ կեդրոնը կը ծաղկէր ու կը բարգաւաճէր իթթիհատական վոհմակը...*

*Ամերիկեան թերթերը կը յայտնէին, թէ Թալեաթ փաշան շատ յարմարաւէտ կեանք կը վարէր Պերլինի մէջ եւ 10 միլիոն Մարք ունի Պերլինի դրամատան մէջ: Սակայն տարիներ ետք, Թալեաթի կին Հայրիէն պիտի ըսէր. "Շատ դժուար օրեր ապրեցանք Պերլինի մէջ: Վաճառեցինք ձեռքիս մատանիները, նոյնիսկ ամուսինիս տրուած վերջին յուշանուէրներն ու շքանշանները վաճառեցինք": Ասոնք մարդակեր գազանի փուճ զանկին տառապեալի լուսապսակ դնելու առաջին ապաշնորհ փորձերն էին:*

*Հայ վրիժառու Սողոմոն Թեհլերեանը պաշտպանելու համար հայկական Սփիւռքի հաւաքած 426 հազար մարքով (այդ օրերու համար հսկայական գումար) Գերմանիոյ ամէնէն յայտնի երեք փաստաբանները կը վարձուին: Նիստը կը սկսի, երբ դատաւոր դոկտոր Լեհմպըրկը վկաներուն եւ փաստաբաններուն կը յիշեցնէ, որ դատավարութիւնը ո՛չ թէ Հայաստանի, այլ Պերլինի մէջ է եւ կոչ կ'ընէ քաղաքական մեկնաբանութիւններուն մէջ չմտնել եւ մեղադրանքները իրաւական սահմաններէն դուրս չհանել:*

*Ասիկա ուրիշ բան չէր, եթէ ոչ քօղարկուած հրահանգ՝ շրջանցել ցեղասպանութեան մանրամասնութիւնները, առաւել եւս՝ զայն կապելով գերմանական իշխանութիւններուն հետ:*

*Սակայն փաստաբանները այդ կարծիքը չէին բաժներ, իսկ մէկ բռունցքի վերածուած Սփիւռքը օրէօր համաշխարհային հանրութեան առողջ հատուածին ուշադրութիւնը աւելի կը բեւեռէր այդ նողկալի դատավարութեան վրայ: Այդ եւ միա՛յն այդ՝ ակնկալուող սարսափելի բացայայտումներն էին պատճառը, որ հակառակ փաստաբաններու դատավարութիւնը շարունակելու պնդումին, դատաւորը շատ արագ կը հրապարակէ Սողոմոն Թեհլերեանը արդարացնելու վճիռը: Այս է բացարձակ ճշմարտութիւնը եւ այս դատավարութեան վերաբերեալ եւրոպական արդար դատարաններու մասին պնդումները բացարձակ սուտ են:*

*Ապացոյցնե՞ր պէտք են՝ խնդրեմ...*

*1931-ին Թալեաթ փաշային կինը՝ տիկին Հայրիէ, նամակ կը ստանայ ընտանիքի բարեկամ "Տոյիչ" դրամատան (դարձեալ այդ չարաբաստիկ դրամատունը) տնօրէն Վասսերմանէն, ուր վերջինս կը յիշեցնէ, թէ ըստ գերմանական օրէնքի՝ դիակը առանց թաղելու առաւելագոյն 10 տարի կրնան պահել, իսկ այդ ժամանակը ամբողջանալու մօտ էր: Նամակը ստանալուն պէս տիկին Հայրիէն կ'երթայ Շիւքրիւ Սարաչօղլուին քով: Սարաչօղլուն կ'ըսէ, թէ "այդ հարցը իմ ուժերէս վեր է", եւ տիկնոջ համար Աթաթուրքին հետ հանդիպում կը կազմակերպէ:*

*Հանդիպման աւարտին, որուն որոշ նախարարներ ալ մասնակցած էին, Աթաթուրքը ըսած է. "Այս պահուս ինձմէ մի պահանջէք, որ դին բերեմ, այս մասին մենք Գերմանիոյ հետ չգոցուած հաշիւներ ունինք դեռ, թոյլ տուէք հիմա թաղեն, երբ ժամանակը գայ, ես անձամբ կը բերեմ աճիւնը":*

*Ինչ-ինչ պատճառներով Աթաթուրքը չի կատարեր իր խոստումը, բայց... անոր փոխարէն ատիկա "երախտապարտ" գերմանացիները ըրին...*

*Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին Ատոլֆ Հիթլերը, թուրք-գերմանական յարաբերութիւնները աւելի սերտացնելու նպատակով, Թալեաթ փաշայի ոսկորները Գերմանիայէն կը ղրկէ Թուրքիա: 1943-ի Փետրուար 25-ին Սիրքէճի կայարանէն վերցուած աճիւնը նախ կը տանին Շիշլիի հիւանդանոց, այնուհետեւ յաջորդ օրն իսկ, աննախադէպ զինուորական արարողակարգով կ'ամփոփեն Շիշլիի Ազատութեան յուշահամալիրի բլրան վրայ: Թափորին առջեւ եղած է հանրապետութեան նախագահ Իսմեթ Ինոնիւին ծաղկեպսակը...*

*Հիմա գանք երկրորդ՝ ալ աւելի քստմնելի դատավարութեան:*

*1918 Թուականի Մուտրոսի զինադադարէն ետք Կոստանդնուպոլիս սկսուած դատավարութեամբ երիտթուրք ղեկավարները պատասխանատուութեան կանչուեցան Օսմանեան կայսրութիւնը Առաջին Աշխարհամարտի մէջ ներքաշելու եւ հայերու կոտորածն ու տեղահանութիւնը կազմակերպելու մեղադրանքով: 1919-ի Ապրիլ 27-ին Կ. Պոլիս սկսուած եւ Յունիս 25-ին աւարտած դատական նիստերու ժամանակ մեղադրեալներուն թիւը (միայն "Միութիւն եւ Յառաջդիմութիւն" կուսակցութեան կեդրոնական կոմիտէի եւ երիտթուրքական կառավարութեան անդամներու շրջանին) 31 մարդ էր, որոնցմէ 11-ը դատած են հեռակայ կարգով, իսկ 20-ը՝ դատավարութեան նիստերուն ներկայ եղած են:*

*Դատավարութեան մանրամասնութիւնները ձգելով ուրիշ, աւելի ընդգրկուն յօդուածի մը՝ այժմ հաստատենք միայն, որ հեռակայ կարգով դատապարտուած տասնմէկ գլխաւոր յանցագործներէն եւ ո՛չ մէկը մեռաւ իր բնական մահով: Անշուշտ եւրոպական "ամենակարող" գաղտնի ծառայութիւնները այդպէս ալ մեղաւորները "չգտան": Փոխարէնը զանոնք գտան հայ վրիժառուներուն անվրէպ գնդակները: Գտան Եւրոպայի ու Թիֆլիսի, միջինասիական շէկ անապատներու եւ Պաքուի մէջ...*

*Ամենահետաքրքրականը սակայն, դատավարութիւն կոչուած այս խեղկատակութեան նախապատրաստումն էր: 1919-ի*

*Յունուար 28-ին, Ալի Քեմալը «Սապահ» օրաթերթին մէջ կը գրէր. "Զորս կամ հինգ տարի առաջ պատմութեան մէջ նախադէպը չունեցող ոճիր մը կատարուեցաւ, յանցագործութիւն մը, որ ամբողջ աշխարհը սարսափեցուց: Եթէ կ'ուզենք պատկերացում տալ այդ ոճրագործութեան չափին եւ պայմաններուն մասին, ապա ոչ թէ հինգէն տաս, այլ՝ 100 հազարաւոր յանցագործներու մասին պէտք է խօսինք: Արդէն բացայայտուած է, որ այդ ողբերգութիւնը իրականութեան մէջ ծրագրուած էր ըստ Իթթիհատի կեդրոնական կոմիտէի ընդունած որոշումներուն": Իսկ 1919-ի Մարտ 17-ին, ներքին գործերու նախարար Ճեմալը (Ահմետ Ճեմալ փաշայի հետ չշփոթել) «Ալեմտար» օրաթերթին տուած իր հարցազրոյցին մէջ արձանագրած է, որ «իթթիհատականները շուրջ 800 հազար հայ տեղահանած ու կոտորած են», ինչպէս նաեւ փորձած էր առաջ քաշել թուրք ժողովուրդի եւ իր կառավարութեան անմեղութեան վարկածը:*

*Ներքին գործերու նախարարը նաեւ իր կառավարութեան կողմէ իթթիհատականները պատժելու անհրաժեշտութեան մասին կը խօսէր. "...կառավարութիւնը, նախ եւ առաջ, պարտաւոր է մաքրել այն բիծը, որ "Միութիւն եւ Յառաջդիմութիւն" կուսակցութիւնը ձգած է օսմանականութեան վրայ: Ատոր համար կառավարութիւնը տեղահանութեան եւ կոտորածներու ողբերգութեանց հեղինակներուն նկատմամբ պիտի անհրաժեշտ դատաքննութիւն իրականացնէ:*

*Միութիւն եւ Յառաջդիմութիւն ըսելով՝ օսմանեան ազգ չենք հասկնար: «Իթթիհատ վէ Թերաքքի» կուսակցութիւնը բոլորովին այլ աւազակախումբէ բաղկացած էր: Տեղահանութեան եւ կոտորածներու պատճառով եւ ոչ մէկ պատասխանատուութիւն կը ծանրանայ օսմանեան կառավարութեան եւ ազգի ուսերուն:*

*Եթէ տեղահանութեան եւ կոտորածներու հեղինակները չդատապարտուին, ահա այն ատեն է, որ կառավարութիւն եւ ժողովուրդ պատասխանատու կը դառնան":*

*Նոյն Ճեմալը 1919-ի Մարտ 12-ին յայտարարած էր, թէ երիտթուրքերու ձերբակալութիւնները օրինական են, քանի որ կատարուած են Նախարարներու խորհուրդի կազմած օրէնքի ծիրին մէջ, եւ "ոչ միայն Թուրքիոյ, այլեւ ամբողջ մարդկութեան շահը կը պահանջէ պատժել իրենց տարօրինակ քաղաքականութեամբ հայերու եւ յոյներու տարագրութեան պատճառ դարձած այդ չարագործները":*

*Այսպէս, նենգամտօրէն եւ պատմական ճշմարտութիւնները աղաւաղելու յստակ նպատակով կը խօսէր Թուրքիոյ ներքին գործերու նախարարը քաներորդ դարասկիզբին: Այդպէս կը խօսին քսանմէկերորդ դարասկիզբին նենգամտութեամբ իրենց նախորդը տասնապատիկ գերազանցող վարչապետ Էրտողանն ու Տաւուտօղլուն: Եւ ո՛չ այն ժամանակ, ո՛չ ալ առաւել եւս հիմա "լուսաւորեալ եւ քաղաքակիրթ" աշխարհէն մէկը հարց չտուաւ այդ ստահակներուն, թէ՝ ի՞նչ կ'ընէիք, պարոնայք մարդակերներ, երիտթուրքերէն առաջ ու յետոյ... հը՞, ի՞նչ կ'ընէիք, մի՞թէ դարեր շարունակ բարեգործութեամբ զբաղած էիք Արեւմտեան Հայաստանի ու Պալքաններու, Յունաստանի, Կիպրոսի, Արցախ Աշխարհի եւ դեռ շատ ու շատ երկրներու մէջ, ուր ձեր վայրի սմբակներուն անջնջելի հետքերը կան...*

*Մեծ, շատ մեծ եւ շատ իմաստուն է հանճարեղ Րաֆֆին, թէեւ ամբողջապէս անկեղծ ըլլալու համար ըսենք, որ այդ օրերուն, ի պատասխան ներքին գործերու նախարար Ճեմալի "յայտնագործութիւններուն" թուրքական "Ժողովուրդի Ձայն" օրաթերթը հետեւեալ բացայայտումը կ'ընէր.*

*«Դժբախտաբար, հակառակ Ճեմալի զայրոյթին ու հաւաստիացումներուն, Իթթիհատը ամէն տեղ կ'ապրի ու կը գործէ, նոյնիսկ հոս՝ Պոլսոյ մէջ, անոր քիթին տակ: Որքա՜ն իրաւունք ունէր կրթական նախարար Ալի Քէմալ պէյը, երբ ասկէ 1-2 ամիս առաջ կը գրէր, թէ՝ ո՛ր թուրքին մորթը քերելու ըլլաս, տակէն իթթիհատճի (երիտթուրք) մը կ'ելլէ»:*

*Այսպիսի բացառութիւններ եղած են, բայց այդ արդէն ուրիշ պատմութիւն է...:*





